

ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ

Չարքանձախ և արջակ
ԵՐԳԻՇՈՒՄԲ



հրատարակչություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2008

ՀՏԴ 891.981-7 Գրիգորյան
ԳՄԴ 84Հ
Գ 888

Տպագրվում է ԼՂՀ պետպատվերով

*Միջոցառման մատչելիության
Հենա Անտոնյանի Գրիգորյանի լուսանկարների*

*Խմբագիր՝ Ռոբերտ Եսայան
Կազմի նկարը՝ Պետո Պողոսյանի*

Գրիգորյան Ա. Ա.

Գ 888 **Չափածո և արձակ երգիծանք**: Պարոդիաներ, ֆելիետոններ, Էպիգրամներ, մանրապատումներ, Արցախյան բանահյուսության նմուշներ/Արիս Գրիգորյան.- Ստեփանակերտ: Վաչագան Բարեպաշտ, 2008. - 80 էջ:

Հեղինակը երգիծական ստեղծագործություններով վաղուց է հանդես գալիս պարբերական մամուլում: Նրա ֆելիետոններն ու երգիծական բանաստեղծությունները տպագրվել են «Բարեկամություն», «ԼՂ հանրապետություն», «Մարտիկ», «Պղլը-Պուղի» և այլ թերթերում ու հանդեսներում, իսկ առանձին գրքով առաջին անգամ է ներկայանում երգիծանքի ընթերցողին:

«Չափածո և արձակ երգիծանք»-ը հեղինակի 13-րդ գիրքն է:

ԳՄԴ 84Հ

ISBN 978-99941-2-155-7

© Արիս Գրիգորյան, 2008թ.

ՔՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5-18

Մուրազ Ռոֆլաշյի Ճեմեօնները

- 5 Թղթի... վաճառք
- 7 Ես հոսանք եմ ուզում'մ...
- 9 Բանն արադի մեջ չէ, այլ...
- 11 Փողէրս, փողէրս...
- 13 Վախ՝ Ածանս, վախ՝ Կջկջանս...
- 15 Զգո՛ւյ՛ջ...
- 17 Ահա, այսպիսի բաներ...

19-26

Վրճալի Մարմալալիկներ

- 19 Ձկների՛ն խրատե՞ք...
- 19 Անմիջապես ազատիր
- 20 Հայոց լեզվի դասին
- 20 Անդապաճան... սեր
- 20 Երկխոսություն
- 21 Նոր համալիր
- 21 «Չծխողը»
- 21 Պարտքով փող
- 21 Զարմանք
- 22 Ակամա անեկոտներ
- 23 Ժպիտներ N զորամասից
- 26 Եթերում Արցախի հեռուստատեսությունն էր...

27-30

«Երրօրյա շեմլեթի»-ի ձևաչափեր

31-44

Լեւալուստի-Փարվալ

- 32 Գուսանները Փարվանա
- 33 Գուսանները սիրահարված
- 35 Գուսանական
- 36 Յոթ գուսանների բալադը
- 38 «Փարվանա» լեզենդը
- 39 Անլսելի-անպատմելի
- 40 Ամենից առաջ
- 41 Փրկանք
- 42 Ժպիտդ երգ է անշեջ...
- 42 Ճանապարհս...
- 43 Հիմա տաքսի կվարծեմ...
- 44 Անշեջ երգի մասին, Ա՝ կույսին Փարվանա

45-54

Էրրորներ եւ Ճեմեօններ

55-66

Այրուսալ՛նէ, ըն՛ք բի՛շ էլ սրալետէ...

Ուսանողական հումորեսկներ

67-79

Ջորճորալիկ Պլեյադիկներ

- 67 Այն ի՛նչն է... (Հաներուկներ)
- 71 Սրամտություններ
- 74 Առածներ ու ասացվածքներ
- 75 Առածներ ու ասացվածքներ՝ մեկնաբանություններով հանդերձ
- 76 Խաղիկներ
- 77 Ղարաբաղս...




ԵՐԳԻՇԱՔԻ ՄԱՍԻՆ

Վի տրվաւ-տրեմ, գուցե՛ս չարս խաւս

Երգիծանքի երգիծանք է՝ շարժան զի-
նի, թէ աղջակ, կարկառոյ, ոք երգիծա-
կան լիկի: Թէ չէ՛ հաւսնա է պարսա-
հուն, երբ ընդերջում եւ, բայց զի-
ճարոյ, ընդ՛ս աւան, չի գտնա: Եւս...
խաւսաւս պիտի ոք կարկի եւ պարս:
Բաւ երջն՛ի: Երգիծանքի ինքն պտոյնի
ձեռն խաւսաւս պտոյն է լիկի, աղջակա՛ն
էլ ի՛նչ, երգիծանք...

Հեղինակ



Մուկուզ, Թութապչանի ՏԵԼԻԵՏՈՆՆԵՐԸ

ԹՂԹԻ... ՎՃՃՎԻՔ

Մեր քաղաքում ամեն խանութ չէ, որտեղ սպասարկման կուլտուրան իր բարձրության վրա է գտնվում: Մեզնից յուրաքանչյուրն անձնական գործերով լինում է երկրի խոշոր քաղաքներում, գնումներ կատարելու նպատակով խանութ մտնում ու... հիանում սպասարկման կուլտուրայի բարձր մակարդակով: Բարձր տրամադրությամբ վերադառնում ենք հայրենի քաղաք, իսկ վերադարձին՝ գտնում «նույն ջուրն ու նույն ջրաղացը»:

Մեր քաղաքում ամեն խանութ չէ, որ փայլում է դատարկ դարակների առատությամբ: Բայց, իհարկե, շատ խանութներ կան, որտեղ այդպիսի դարակները չափից ավելի շատ են դատարկ: Օրինակ՝ Կիրովի պողոտայի վրա գտնվող Մաքսիմի «գաստրոնոմում», կամ մի քիչ ներքև՝ Հրանտիկի մոտ, քաղաքի մթերային որևէ այլ խանութում մոտենում ես հատով վաճառվող ապրանքների բաժնին և ուղղակի հիանում «հատով» դարակներով: Դի՛փ-դատարկ...

Ի՞նչ անել: Չխոսելն անտարբերություն է համարվում, խոսելը՝ «ձայն բարբառո յանապատի»: Բայցևայնպես՝ ո՞նց կարելի է շրջանցել այս պրոբլեմը, կամ անհոգությամբ ընկալել այն փաստը, որ շատ հաճախ մեր մթերային խանութներից հանկարծակիորեն անհետանում են շաքարը, լուցկին, բրինձը, ամիսներով չեն

լինում կարամելի թեկուզ ամենահասարակ տեսակները: Իսկ «գրեչկա»-ծավար ե՞րբ է եղել ո՞ր...

լինում կարամելի թեկուզ ամենահասարակ տեսակները: Իսկ «գրեչկա» ե՞րբ է եղել ո՞ր...

Հաճախ էլ այնպես է պատահում, որ խանութում գնելու բան ես գտնում և գնումները կատարելուց հետո մնում մեղավոր-մեղավոր կանգնած, թե ինչ է՝ փաթեթավորման համար թուղթ չկա: Հետո էլ չես բերել:

Հաճախ էլ, վաճառողները ոչ մի կտոր թուղթ չստանալով՝ չեն դժգոհում, չեն բողոքում «վերևներում» ստաճներիս, այլ՝ եռանդագին թուղթ են փնտրում, գտնում-բերում են՝ գնորդին հաճոյանալու, որ իրենց ևսխանձ չհարուցող վիճակից դժգոհող չլինի: Ի՞նչ են քողարկում դրանով, ո՞ւմ են քողարկում՝ մարդ մի կարգին չի կարողանում բան հասկանալ: Համ էլ՝ ինչո՞ւ վատամարդ դառնան, ասում են, կիեռացնեն աշխատանքից՝ կմնան անգործ, պարապ-սարապ:

Հաճախ էլ՝ այդ թուղթը ուրիշ խանութներում վաճառվում է... կարագի գնով ու կարագի կտրոնով: Չարմանո՞ւմ եք: Իհարկե, զարմանալի է, որ քաղաքակիրթ այս դարում կան մարդիկ, ովքեր կարագի գնով ու կարագի կտրոնով թո՛ղթ են առնում: Ինչի՞՞ համար՝ ո՞վ գիտե...

Խանութների հասցեներ, վաճառողների անուն-ազգանուններ, կարծում եմ, պետք չէ թվարկել, բայց ինքնին հետաքրքրական է այն փաստը, որ միայն անցյալ տարվա ընթացքում, հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, մեր քաղաքի յուրաքանչյուր մթերային խանութում (այսպես կոչված՝ «գաստրոնոմում») վաճառվել է մոտ 150-160 կիլոգրամ թուղթ: Այո, այո, կարագի կտրոնով ու կարագի գնով: Իսկ թե այդքան կիլոգրամ կարա՞գն ուր է գնացել՝ ոչ ոք ստույգ ոչինչ ասել չի կարող: Ուստի, ես, ստեփանակերտցի մի հասարակ քաղաքացի՝ Մուկուչ Թոփայան անուն-ազգանունով, դիմում եմ «Խնտերպոլին»։ «Հարգարժան ինտերպոլիցիներ, խնդրում եմ մեր կորցրած կամ գողացված (ինչպես ուզում եք՝ ձևակերպեք) կարագ գտնելու դեպքում գողունն անկայման հանձնեք Եվրոդատարանին՝ հետաքննության, իսկ թուղթն անմիջապես մեզ ուղարկեք, հա՛... Եթե փաթաթելու բան չճարենք՝ գոնե մատերիալից-բանից կգրենք»...

1989, օգոստոս, Ստեփանակերտ



ԵՄ ՀՈՍԱՆՔ ԵՄ ՌԻՉՈՒՐԻՄ...

-ՉԷ, հաստատ որոշել եմ, վաղը «ծախ» գիծ եմ քաշելու, թե չէ՝ ես մթության մեջ ինչքան կարելի է խարխափել: Հոսանքը միացնելու եմ նստեմ հեռուատացույցի առաջ: Ողջ օրը...

Ամեն անգամ կինս հանդիմանում է.

-Գործ չունես, կտուգանես, 50 հազարը որտեղի՞ց ես տալու: Մեզ հոսանք պետք չէ: Թեև փայտ էլ չունենք, բայց էլի մի կերպ յույս կգնանք...

Է՛, յույս ենք գնացել է՛, որ մնացել ենք ես անտեր հանրակացարանին դատապարտված: Կոյուղու խափանումները քիչ էին, հիմա էլ հոսանքն են անջատել: Կոյուղու մերը չմեռնի, որ խա-փանվում է՝ սաղ միջանցքը ջրով լցվում է, պատերից էլ՝ հոսում դեպի բնակարանները: Օրերով, շաբաթներով՝ «չըմփ, չըմփ, չըմփ», մեր քայլերից ջուրը մեկ տեղատվություն ու մեկ էլ մակըն-թացություն է ապրում:

Մի հարցնող չկա.

-Բա ձեր հանրակացարանը պարետ չունի՞:

Ունի, ինչո՞ւ՞ չէ, աշխատավարձ ստանող կա, անունն ինչ էր նրա՞, Էս, որ մեկ-մեկ հանրակացարան էլ է գալիս: Է՛, անունն ի՞նչ կարևոր է: Կարևորը պարետ ունենալն է:

Կոյուղու խափանումները քիչ էին, հիմա էլ հոսանքը չկա: Սաղ քաղաքը լույսով ողողված՝ մեր ես անտեր հանրակացարանում խավար է ու խավար: Անտեր ասացի՝ լավ է՝ կինս չստեց, թե չէ՝ էլի կհակաճառեր, կասեր՝ տեր ունի: Տեր ունի, իհարկե, կարծում եք՝ չզհիտե՞մ, թե՞ մտածեցիք՝ կարող է վախից անունը չտամ: Չեմ վախի: Թուրքի առաջ կանգնել ենք՝ չենք վախեցել, հիմա՞ ումից պիտի վախենանք: Էստեղ են ասել է՛, քնածը վեր կացավ՝ արթունին վախեցրեց:

ՉԷ, Էսպես չի լինի, մի ամսից ավելի է՝ խավարում խարխա-փում ենք: Վաղն անպայման պիտի գնամ, առանց դուռը բախելու բացեմ ու մտնեմ ֆաբրիկայի փոխտնօրենի առանձնասենյակը և ասեմ.

-Հարգարժան պարոն Յուրի Բարսեղյան, մեզ ինչի՞ համար ես պատժում, նրա՞ համար, որ փողը ժամանակին մուծել ենք...

-Ի՞նչ փող,-իբր անտեղյակ՝ կհարցնի:

-Էս էլի՞, օգտագործված հոսանքի արժեքը:



-Հա՛, -միանշանակ կժպտա հարգարժան պարուն ու, -ծեզ
չեմ պատժում է՛, սրանց եմ պատժում, ովքեր դեռ մինչև հիմա չեն
մուծել...

-Բա որ մեր շենքի միայն երկու բնակարաններում հոսանք
կա՝ նրա՞նց ով պիտի պատժի...

-Ես սրանց հետ գործ չունեմ: Սրանք «ծախ» գիծ են
քաշել՝ թող էլեկտրացանցն այդ գործով զբաղվի: Ուզում է՝
պատժի, ուզում է՝ չպատժի, ինձ համար մեկ է...

Էլեկտրացանցում էլ երևի կասեն՝ մեր ի՞նչ գործն է, շենքն
իրենցը չի՞, թող իրենք էլ գլխացավանքի մեջ ընկնեն:

Ես էլ չեմ ուզում գլխացավանքի մեջ ընկնել:

Կինս ճիշտ է ասում.

-Գործ չունես, սրանք թիկունք ունեն՝ «ծախ» գիծ են քա-
շել: Դու թիկունք չունես, սրանց հետ չես կարող չափվել...

Իհարկե, չունեմ ու չեմ էլ ուզում ունենալ: Ես հոսանք եմ
ուզում, հոսանք... Թե չէ՝ հոսանքն անջատած, գազն անջատած...
ժողովուրդ, խնդրում եմ աչքով չտաք՝ հանկարծ ջուրն էլ կան-
ջատեն... Բա՞՞...



ԲԱՆ ԱՐԼՈՒՄԻ ՄԵՏ ԶԷ, ԼԵՆ...

-Յա՛, Ես ի՞նչ բան է, Ես ուսանողները փոխանակ դասախոսությունը լսեն՝ մի բերան հրիռում են,-ինքն իրեն մտմտաց պրոֆեսոր Ռուբեն Չաքարյանն ու դիմեց երկրորդ շարքի երրորդ նստարանի ուսանողուհիներից մեկին.

-Հապա մի կրկնի՛ր ասածս վերջին բառերը:

Ուսանողուհին կանգնեց ու... Ասես բերանը ջուր էր առել:

Վերջին նստարանի ուսանողուհիներից մեկն այլևս չէր կարողանում համբերել.

-Պարոն պրոֆեսոր ջան, պարոն պրո...

-Սո՛ւս կաց,-բռթեց կողքինը,-մի՛ ասա,- ու հրիռոցն ավելի աշխուժացավ:

Պրոֆեսոր Չաքարյանը նորից մտատանջության մեջ ընկավ. «Ես ուսանողներն Եսոր ի՞նչ են լսել»:

Ու այդպես էլ, մինչև օրվա վերջը, ոչ մի բան կարգին գլխի չնկավ: Պասերն էլ՝ «լավ-օսավ» վերջացրեց ու երեկոյան բռնեց տունդարձի ճանապարհը:

Ճանապարհին էլ՝ նկատում էր, որ մարդիկ ուրիշ ձևով են նայում իրեն, իսկ ծանոթներն էլ՝ «ծիծղըմ-ծիծղըմ» տալով բարևում-անցնում են, բան ասող չկա:

-Ա՛յ մարդ, Ես ի՞նչ է պատահել սրանց,-անհանգստացած պրոֆեսորն ավելի արագացրեց քայլերը:

Վերջապես հասավ տուն: Տան շեմին կոշիկները հանելիս միայն նկատեց, որ... մի «թայն» իրենը չի:

-Հաբա ո՞ւմն է,-նորից մտատանջության մեջ ընկավ:-Հա՛, առավոտյան մտա քրոջս տուն, չլինի՞ Էնտեղ են գլխիս «օյին» խա-դացել:

Էլ ետ նորից հագնում է կոշիկներն ու, հայդա՛ քրոջ տուն: Ճանապարհին էլ չէր կարողանում հանգստանալ.

-Ա՛յ մարդ, դե, ասենք, առավոտյան մտա տուն: Նախաճաշում էին, ինձ էլ հրավիրեցին, նստեցի, դեռ Էն տղին էլ մի գլուխ քարոզ էի կարդում, որ քիչ կոնծի, որ արաղ կոնծելով մարդ չեն դառնում: Իսկ ես մի կում անգամ բերանս չառա: Դուրս գալիս էլ, կարգին չեմ հիշում, կարծեմ ուշանում էի, վռագ հագա կոշիկներս ու գնացի:

...Դուռը քրոջ տղան՝ Սեյրանը, բացեց.

-Հը՛, ո՞նց անցավ օրդ, քեռի՛ պրոֆեսոր ջան: Հո կոշիկս ոտքդ չէ՞ր սեղմում:

-Սո՛ւս, խաղթ ու խայտառակ դառա:



-Քեռի՛, եւքան տարի է՛ խմում եմ, լսած կա՞ս, որ կոշիկս թարս եմ հագել, կամ էլ՝ իմի փոխարեն հագել եմ ուրիշինը: Դե՛ իմացիր, որ բանն արադի մեջ չէ, այլ...

Կիսատ թողեց խոսքը, որ պրոֆեսոր քեռին հանկարծ չվիրավորվի.

-Դե՛, քեռի ջան, էլ գլխիս քարոզ չկարդաս, լա՞վ...



ՓՈՂԵՐՍ, ՓՈՂԵՐՍ...

Արդեն քանի օր է՝ հանգիստս կորել է: Ի՞նչ մարդիկ են, չեն գնում իրենց փողը ստանան, որ ես էլ տեսնեմ՝ ինչ եմ անում: Ճանապարհին էլ, ամեն անգամ, որ պատահում եմ, մի կերպ զսպում եմ ինձ, որ հանկարծ չհարցնեմ այդ մասին, բայց դե, մեկ է, էսպես երկար շարունակվել չի կարող:

Չէ, էլ համբերել չկա, ահա, գալիս է.

-Հը, քեռի, էդ էլի անտառ ես գնում, հա՞: Այ մարդ, էդ անտեր անտառում ծառ չես թողնելո՞ւ, մի քիչ հանգստացիր, էլի:

-Է՛, ի՞նչ հանգստանամ, մե՛ր տղա:

-Մի օր տանը նստիր, կամ էլ՝ հենց շրջկենտրոն գնա, էն փողերը չեն տալի՞ս, գնաս ստանաս:

-Տալիս են, է՛, բայց դե, դրա համար վեր կենամ շրջկենտրոն գնա՞մ, աղջիկս կստանա-կուղարկի, էլի:

-Հա՛...

Լավ... Ճարս՝ ի՞նչ: Էլի ստիպված պիտի սպասեմ: Քունս էլ չի տանում էդ անտեր մտքից: Գիշերները ո՞նց կլուսացնեմ:

Հը՛մ: Երկրորդ օրն էլ անցկացրի, կրկին երեկոյանում է, ցե-րեկներն էլի որոշ չափով հեշտ եմ տանում, գիշերը շատ է դըժ-վար:

Հը՞, ես ոնց որ քեռիս չի՞, ես ո՞ւմ կույն է առաջն արած բե-րում: Բա իրենցը զոմեշ չի՞: Ոնց որ փողն արդեն ստացել ու ա-ռոք-փառոք ծախսում են, ես էլ՝ ուղտի ականջում քնա՞ծ: Լավ չի: Անցնեմ դրան ետևը, ինձ չնկատի: Վաղը նեթ գործի կանցնեմ:

Հենց լուսանում է թե չէ՝ իսկույն բակում եմ: Ախպեր, ինչ սո-վորություն է, հա՛: Դե մեր տունը ճանապարհի վրա է, եկող-գնա-ցողներն էլ՝ աչքիս առաջ:

Հա՛, քեռակինս գալիս է, մոտենամ:

-Քեռակի՞ն, առավոտ-առավոտ էդ ո՞ր ես վազում տհենց, չի՛նի՞ քեռիս հիվանդացել ա:

-Քեռիդ լավ է, հրեն՝ «հեռու» բոստանում աշխատում է: Հի-վանդը ես եմ, բուժկետ եմ գնում, տեսնեմ՝ Սոնյան դեղից-բանից կունենա՞մ, գուցե օգնի:

Հա՛... Գործերս ոնց որ աջ են գնում: Տանը մարդ չկա: Կի-նը գյուղամեջ գնաց, մինչև ետ կգա՝ առնվազն մեկ ժամ կքաշի, ամուսինն էլ հանդի բոստանում է, երեկոյան տուն կգա երևի: Գը-նամ, էլ ինչո՞ւ եմ ուշացնում, բայց դե՝ տուն մտնելիս մարդ-մուրթ չտեսնի՞՞ հանկարծ, էս վերջես գողերի նկատմամբ աշալիջություն

ուժեղացել է գյուղացիների մոտ: Չէ, ոնց որ՝ մարդ չկա, մտնեմ քակ, հետո՝ տուն: Պատուհանով:

Ես ի՞նչ է, դուռը բա՞ց են թողել խելոքները: Ոնց որ կոմունիզմի օրոք ապրելիս լինեն, կողպեք էլ չեն դնում դռան վրա: Լավ, սկսեմ մուտքից, անցնեմ բոլոր սենյակներով: Ամեն ինչ տակնուվրա կանեմ, բայց փողը կճարեմ: Ժամանակս էլ՝ բոլ-բոլ հերիքում է: Բայց էս ի՞նչ է, երկու սենյակն արդեն խառնեցի իրար՝ փող չկա: Աղջիկն էլ քաղաք է գնացել, լավ է՝ ձեռքի պայուսակը թողել էր՝ մի հինգհազարանոց կար մեջը: Երկրորդ սենյակում էլ բան չգտա: Ես մարդիկ մի՞թե փողը լրիվ ծախսել են, բա պարտքերս ինչո՞վ պիտի տամ: Վա՛խ, պարտքերս, պարտքերս: Ես էլ հույս եմ պահել, որ պարքերիս գոնե կեսը սրանց փողով կմարեմ:

Ուրեմն իզո՞ր էսքան չարչարվեցի, էսքան ապրանքը դես ու դեն ցրեցի, գոնե չարչարանքիս վարձը ստանայի: Թե չէ՝ հինգ հազար դրամ: Ի՞նչ փող է դա: Էդքան փողով ո՞վ էսքան գործը կաներ: Բա ես էլ մարդ եմ, չէ՞: Բա գոնե էսօրվա իմ չարչարանքը չվարձահատուցվի: Բա՞: Հիմա ամեն ինչ հաշիվ-հաշվարկով է, չէ՞...



ՎԻՒՆՆԱԿ, ՎԻՒՆՆԱԿ... ԿՉԿՉՆԱԿ...

Մեր մի գյուղացի մի կին խնդրեց ֆեյհետոն գրել իր Ածան ու Կչկչան հավերի մասին և բառացիորեն պատմեց հետևյալը.

-Իմ մասին երկու բառով ասեմ, որ վերաբնակչուհի եմ և ապրում եմ գյուղի ծայրամասում գտնվող մեր Լորակառույց տանը: Ոչ մեկին չեմ խանգարում, ոչ մեկի բոստանից ոչ մի բան չեմ թռցնում, ոչ մեկի հավերի վրա էլ, բնական է, աչք չունեմ: Բայց արի ու տես, որ...

Ես ընդամենը երկու սեփական հավ ունեմ: Մեկը՝ Ածան, մյուսը՝ Կչկչան: Ածանը հա՛ աճում է, իսկ Կչկչանը՝ հա՛ կչկչում: Ածանի ձվով ենք յուր գնում: Դե, Կչկչանի արածն էլ քիչ չէ, գրուց-ընկեր է էլի, բոստանում ես աշխատում եմ, ինքը՝ կչկչում է դեսից-դենից: Համա որ լեզուն մի քիչ լավ չեմ հասկանում վատը դա է:

Այդպես էլ ապրում ենք: Բայց մի օր, ավելի ստույգ՝ երկու օր (մայիսի 7-ին և 8-ին) մեր այդ համերաշխ զույգը տան Լերքևի ճանապարհի տակ ամեն ամեն օրվա պես քուջուջ անելիս է լինում, հանկարծ Կչկչանը սովորականից մի քիչ ավելի ուժեղ է կչկչում: Իսկույն վազում եմ դեպքի վայրը և ի՞նչ տեսնեմ: Կչկչանիս գլուխը չկա, իսկ Ածանից էլ միայն մի քանի փետուր է մնացել:

Դու մի ասի, այդ օրերին որսկան Գուրգենն իր «որսկան» շան հետ այդ կողմերով անցկացած է լինում: Ինքն էլ է լսած լինում Կչկչանիս այդ տարօրինակ կչկչոցը, իսկույն էլ մոտ է կանչում «ընկերոջը»՝ հանկարծ անպիտանը մի բան արած չլինի՞...

Կասկածում է, հա, բայց դե՛ շան տեղը երդվում է.

-Չէ, ի՞նչ եք ասում, իմ շունն այդպիսի բան չի անի: Գլուխը պոկի տանի, ջանսաթը թողնի՞, լինելու բա՞ն է: Կարո՞ղ է իմ շանը ես լավ չեմ ճանաչում, ողջ օրը միասին ենք՝ առավոտից-իրիկուն: Այդ ո՞ր՝ որսի, այդ որտե՞ղից՝ որսատեղից: Այդպես՝ ամեն օր: Ամեն տեսակի միս կերած է, բայց այդ անպիտանը, մեղմ ասած, հավի մսից խոկում է:

Ասում-գնում է: Չեմ կարողանում «հախ» անել վզին: Ես էլ, ախր, գիտեմ, որ այդ օրերին, բացի որսկան Գուրգենից ու իր որսաշնից, ոչ ոք այդտեղով ոչ անցել է, ոչ Կչկչանիս ուժեղ կչկչոցը լսել է:

Իսկ մի օր էլ, որ ասացի.

-Բա ինչո՞ւ շանդ վռագ մոտդ կանչեցիր,-զգաստացավ մի քիչ, բայց իրեն չկորցրեց, ասաց.

-Դե, կարող է փռշտացել եմ ևս, կամ էլ՝ հազել, քո՞ ինչ գործն է: Համ էլ՝ ես շանս չեմ կանչել:



Մի քանի օր էլ է անցնում: Ինքս ինձ մտածում եմ. «Չէ, ոնց որ՝ սարում որսը պակասել է»:

Ասում եմ.

-Կարող է՞ արդեն գյուղում ես որս անում:

-Յա՛, հլա ուբեդիտ չես եղե՞լ, որ դա իմ շան արածը չի,- ասում է ու,-դրա ասողի բերանը...

Չե, չեմ գարմանում, այլանդակ մարդուց միայն այլան-դակ բառեր կարող ես լսել: Ես էլ՝ ի՛մ իմացածն եմ ասում՝ անա-սուն, հիմար...

-Որ կարգին պատվի տեր լիներ, է՛, մարդ չեր նեղանա,- «փիլիսոփայում է» որսկանն ու իբր՝ նեղացած՝ հեռանում:

Մի օր էլ կանգնում է գյուղապետի կողքին, թե.

-Մարդուն տարա քիթը դեմ արի, դակագատ արի, որ իմ շունն այդպիսի բան չի անի: Խի եղքան դուզի է՞, ի՞նչ կա հավի չոր գլխի մեջ, որ տանի: Հը՛մ, մարդ էլ ասո՛ւմ եմ: Տյոտա է: Արշակ տյոտա՛...

Հողեմ գլուխդ, Արշակիս դու տյոտա ասես՝ ես սուս անե՞մ: Լինելու բա՛ն է դա: Կբողոքեմ, բա՞: Այդ ևույն գյուղապետին, մեր՝ Ամառանցայինի գյուղական համայնքի ղեկավար պարոն Օսկան Վարդապետյանին: Կասեմ. «Պարոն ղեկավար, խնդրում եմ, առայժմ, միջոցներ ձեռնարկես: Համապատասխան: Պա՞րզ է: Չձեռնարկես՝ ավելի բարձրին կբողոքեմ: Թերթում գրել կը-տամ: Աջխարհքով մեկ՝ խաղք ու խայտառակ կանեմ: Նրան էլ, քե՛զ էլ»...

Որսկան Գուրգեն՝, դու քո շան հետ իմ հավերն ուտես ու անպատիժ մնա՛ս: Անունս կփոխեմ: Ես քեզ ջրի երեսը կհանեմ: Ես քեզ ուշունց տա՛լ ցույց կտամ: Ես քե՛զ...



ԶԻՄԻՅՇ...

Կրթական հաստատության հիմնադրման կեսդարյա հոբելյանն էր նշվում: Որն էլ լայնորեն լուսաբանվեց զանգվածային լրատվամիջոցների կողմից: Բայց, թերևս, այնքան էլ պարզ չէր՝ կրթական հաստատության հիմնադրման հերթական տարեդարձն էր, շենքի կառուցման, թե՞ 50-րդ թողարկման: Համ էլ՝ դա ի՞նչ կարևոր է: Կարևորը հավաքվելու առիթ ունենալն է, մարդկանց հրավիրել-հյուրասիրել կարողանալը: Իսկ հրավիրված-հավաքվածները շատ-շատ էին, հյուրասիրությունն էլ՝ ճոխ:

Տոնական միջոցառմանը (թեև ծրագրով նախատեսված չէր) համընկել էր նաև դպրոցի գոհված շրջանավարտների հիշատակին պատրաստված կոր վահանակի տեղադրում-բացումը:

...Հրավիրվածների մեջ կային նաև որդեկորույս մայրեր, գոհված ազատամարտիկների հարազատներ: Դե, սևազգեստ մայրը, որ, ընդհանրապես, ուրախ առիթներով կազմակերպվող միջոցառումներին այնքան էլ «չի բարեհաճում» ներկայանալ-մաս-նակցել, ու, թեև այս անգամ էլ չէր ուզում, բայց անհարմար զգաց մերժել հրավերը: Հրավիրել են՝ պիտի գնաս: Որդուդ՝ նվեր մի քա-նի ծաղիկ կվերցնես ու կգնաս: Համ էլ՝ ընկերների «շրջապատում» (կողք-կողքի շարված շրջանակների մեջ) մի անգամ էլ կտեսնես որդուդ: Թե չէ, տանը ողջ օրը նկարի հետ զրուցում ես, զրուցում ու վերջը չի երևում:

...Սուքերից սթափվեց՝ երբ արդեն վահանակի մոտ էր, տեղադրեց որդուն նվեր բերված ծաղիկներն ու գլուխը կամաց վեր բարձրացրեց, հայացքը սահեցրեց նկարների վրայով, տևողեց մեկ-մեկ, ու... չհասցրեց հասկանալ, թե ինչ կատարվեց. «Ո՞ր է... Բա ո՞ր է... Չէ՞ որ կար: Թե՞ սխալվում եմ: Չկա՞ր: Գուցե չի՞ էլ գոհ-վել բալաս»... Ավելի մտազբաղ դառած, թեև առանց այդ էլ՝ ան-հանգիստ էր, թողեց դահլիճը:

-2-եր որդին, մայրիկ, այս դպրոցում չի սովորել, դրա համար են նկարը հանել-կասեն ու գործը դրանով փակված կհամարվի:

Իսկ հաջորդ ուսումնականն սկսվելուն պես աշակերտները թարմ ծաղիկներով դեպի կորացված վահանակը կվազեն, կբարևեն հին ծանոթների պես, կմատուցեն ծաղիկները, բայց պատաս-խան բարևների մեջ իսկույն կնկատեն պակասը՝ Շամիրյան Ալեք-սանդրի չբարևելը: Ինչո՞ւ... Եվ իսկույն դասարան կվազեն համա սարանցուն.

-Բա քո հայրիկը... քո հայրիկը...



-Իմ հայրիկը՝ ի՞նչ...

-Քո հայրիկը... չի՞ զոհվել,-մանկական անմեղ ծայրն ավելի կմեղմանա,-սխալ էր, որ նկարը կար նախկին վահանակի վրա...

Նահատակ զինվորի երկու տղաները չեն հասկանա ոչինչ, ու գլխիկոր, կողք-կողքի, կկանգնեն նորացված վահանակի առաջ...

-Չի՞ զոհվել: Չի՞...,-ծայրն արծազանք կտա դասասենյակներում ու հերոս նահատակների արյան գնով ձեռք բերված խաղաղության մասին պատմվող նոր դասը կիսատ կմնա, բա-ռերը կստեղծվեն ուսուցչուհու կոկորդում ու տղաների աչքերին նայել չի կարողանա:

-Ես ի՞նչ մեղավոր եմ, որ նկարը հանել են,-անիմաստ-տխուր կժպտան նրա աչքերը, և սրտի խորքում վիրավորված ապագա զինվորներն այլևս չեն հավատա այդ աչքերին՝ ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ո՛չ երբեք...

...Իսկ երբ նման երևույթներ են կատարվում մեր շրջապատում՝ մենք մեր աչքերին ինչպե՞ս ստիպենք չտեսնել, ականջնե-րին՝ չլսել, լեզվին՝ այդ մասին չխոսել...

Մինչև ե՞րբ...



ԼԷԼ ԼԵՄՊԻՄԻ ԲԼԵՏՐ...

1988-ի փետրվարյան ընդվզումից երեք ու կես տարի անց անկախություն ձեռք բերած մեր երկու հայկական պետություններում բնակչությունը, հիմնականում, միատարր է, ինչը չի կարելի ասել Պաշտպանության բանակի անձնակազմի մասին:

Վերջերս էլ՝ բանակի մասշտաբով մի անլսելի-անհիմնալի լուր է տարածվել, որը ցնցել է շատերին: Բանն այն է, որ բանակի ուսումնական գործառնության մեկում հինգ լեզվով խոսող մի կուրսանտ է հայտնաբերվել, ով նաև գրում է բանաստեղծություններ ու վեպեր, երգում է, նվագում և այլն:

Մեր թղթակցական խումբն անմիջապես գործառն այցելեց՝ այդ արտակարգ իրողությունը պատշաճ ձևով լուսաբանելու համար:

Զինվորը ներկայացավ մեզ և, ի զարմանս բոլորի, հայերենով հնչած մեր բոլոր հարցերին միանշանակորեն պատասխանեց օտար (մեզ՝ դեռևս ոչ հեռու անցյալի հասարակարգից քաջածանոթ) լեզվով:

Հենց այդ օտար լեզվով էլ ներկայացրեց իր կենսագրությունը, հետաքրքրությունների շրջանակը և այլն:

Պարզվեց, որ նա Կնյազ Թորոնի Թամոյանն է, ազգությամբ՝ եզդի, չորս-հինգ լեզու իմացող (հայերեն՝ ոչ), զորակոչվել է Հայաստանի հյուսիսային հարևան երկրից և շատ լավ է խոսում նաև այդ երկրի վրացերեն լեզվով: Նաև՝ այդ լեզվով բանաստեղծություններ էլ է գրում:

Բանաստեղծություններն, իհարկե, մենք չտեսանք, նաև՝ նոր սկսած «վեպը» մեր բանակի մասին: Վախեցավ չկարողանանք ընթերցել: Երևի մտածեց, որ միատարր բնակչություն ունեցող պետությունում միայն մայրենիով են կարողանում հաղորդակցվել, մոռանալով, որ դարեր շարունակ այս երկիրը խաչմերուկն էր բոլոր լավի ու վատի, արժեքավորի ու անարժանի, քաղաքակրթության ու վայրենիի: Իսկ ժողովուրդն էլ, պարզ է, սովոր է ամեն ինչի՝ և՛ շառ ու շուռի, և՛ թշնամանքի ու կեղծ բարեկամության:

Համենայնդեպս, ո՛չ վրացերենով, ո՛չ էլ ռուսերենով գրած ոչինչ չտեսանք: Դրանից հետո էլ պարզվեց, որ մեր հերոս Կնյազը նաև արհեստավարժ երգիչ է, երգում է վրացերեն, ռուսերեն, հունարեն, մի քիչ արաբերեն, մի այսքան էլ (ցուցամատի ծայրի չափ)՝ հայերեն: Ճիշտն ասած՝ զարմացա, որ մեր կես ժամից



ավել տևած զրոյցի ընթացքում հայերեն մեկ բառ անգամ չարտասանած մարդը կարող է երգել նաև հայերեն:

Իսկ երբ հարցրի (իհարկե՝ ոչ հայերենով), թե հայերեն չիմացող զինվորն ինչպես է հաղորդակցվում իր հայ ծառայակիցների ու հրամկազմի հետ, ինչպես է մասնակցում հայերենով անցկացվող պարապմունքներին ու յուրացնում օրվա դասանյութը և այլն՝ Թամոյանի պատասխանը կարճ էր ու լակոնիկ.

-Вот в этом и вся проблема.

Այո, «проблема»-ն հասկացանք, բայց թե ինչպես է լուծվում դա՝ այլ ինդիք է: Նրան զինվորական կանոնադրությունների ռուսալեզու գիրք է տրամադրվել, բայց հո մարտական ու մասնագիտական պատրաստության բոլոր առարկաների գծով չի կարող չէ՞ ռուսալեզու գրականություն ձեռք բերել և, բոլորի հետ ու բոլորից առանձին, հմտանալ իր զինվորական մասնագիտության մեջ:

Թամոյանի համբավը նաև զորամասում ստուգումներ իրականացնող սպաներին էր հասել: Նրանք էլ փորձեցին Թամոյանի թվաբանական գիտելիքները ստուգել: Բայց երբ պարզվեց, որ $2+2 \times 2$ -ն ոչ թե 6, այլ 8 է անում՝ տարակուսած հեռացան:

Ահա, այսպիսի բաներ: Ճիշտ են ասել, չէ՞. ի՛նչ ասես, որ չի կարող պատահել կյանքում: Բայց որ սկսել է բանակում էլ պատահել՝ դա արդեն իսկապես որ... «проблема» է:



ԱՐՁԱԿ

Մանրագրամոզայաներ

ՉԿՆԵՐԻՆ ԽՐԼՏԵՒ...

Մի մարդ կարթով ձուկ էր որսում, երբ հանկարծ գետափին հայտնվում է բնության պաշտպանության լիազորը:

-Քաղաքացի,-դիմում է նա ձկնորսին,-Դուք մեղադրվում եք որսագողության մեջ:

-Ինչպե՞ս թե,-փորձում է «արդարանալ» որսագողը,-ես իմ կարթերը միայն լողացնում եմ գետում, իսկ Դուք Ձեր ձկներիս խրատեք, թող չմոտենան...

ԱՆՄԻՏԼԴԵՄ ԱԶՈՒՏԻՐ...

Կոմբինատի տնօրենը դիմում է կադրերի բաժնի վարիչին.

-Մեզ մոտ կգտնվի՞ մի երիտասարդ, որ կարողանա փոխարինել ինձ:

-Կփորձեմ գտնել:

-Հենց որ գտնես,-խոժոռվում է տնօրենը,-անմիջապես ազատիր աշխատանքից:



ՀԼՅՈՒՑ ԼԵԶՎԻ ՂԱԿԻՆ

Ուսուցչուհին դիմում է դասարանին.

-Երեխաներ, ո՞վ կարող է ասել՝ բայը քանի՞ եղանակ ունի:

-Բայը ունի հինգ եղանակ,- անմիջապես պատասխանում է առաջին ստտարանի աշակերտը:

-Որո՞նք են,- դիմում է կողքի ստտածին,- կարո՞ղ ես թը-վարկել:

-Ինչո՞ւ չէ,-ասում է աշակերտն ու արագ-արագ վրա բե-րում,- գարուն, ամառ, աշուն, ձմեռ:

-Բա հիզերո՞րդը որն է,-զարմանում է ուսուցչուհին:

ԱՂՎԱԿԱԿԱ... ՄԵՐ

Տնօրենը դիմում է քարտուղարուհուն.

-Հենց որ գործերից թեթևասա՛ կանցես ինձ մոտ,-ու մտնում է իր առանձնասենյակը:

Անցնում է որոշ ժամանակ, իսկ քարտուղարուհին չի երև-ում: Ստիպված կորից է գալիս հիշեցնելու:

-Դեռ ջահել ես,-հանդիմանում է քարտուղարուհուն,-բայց հիշողությունդ արդեն դավաճանում է քեզ:

-Եկա՛, եկա՛,-շտապում է քարտուղարուհին:-Յա՛, կարծում է, թե դավաճանել եմ, Է՞ր,-տնօրենի անհետանալուց հետո ավելա-ցնում է նա:

ԵՐԿԻՈՍՈՒԴՅՈՒՆ

-Ամսագիրը տարար՝ ճամպուկ բերիր: Իսկ եթե ճամպ-րուկը տանես՝ ի՞նչ ես բերելու:

-Ոսկի:

-Ավելի լա՞վ չէ՞ Վոլսկի բերես, թե չէ՞ Ես պոլյանիչկոները մեզ կերան...



ՆՈՐ ՀԱՊԱԿԻՐ

Ելույթ ունենալով հեռուստատեսությամբ՝ կոլտնտեսության ֆերմայի վարիչը հպարտությամբ հայտարարում է.

-Մենք արդեն տեղափոխվել ենք կաթնամթերքային կոոպերատիվի հարյուր գլխի համար:

-Իսկ դուք բոլորդ միասին հարյուր գլուխ կա՞ք,-չի համբերում հեռուստադիտողը:

«ՉԵԽՈՂԸ»

-Այսուհետև չեմ ծխի:

-Չեմ հավատում:

-Արի գրագ գանք:

-Ինչի՞ վրա:

-Սի տուփ «Սայլուտի»...

ՊԱՏԻՎ ՓՈՂ

-Իսկողում եմ պարտքով հինգ ռուբլի տաք:

-Ներեցեք, բայց ես Ձեզ չեմ ճանաչում:

-Դրա համար էլ հենց Ձեզ եմ դիմում, որովհետև ճանաչողներն այլևս պարտքով փող չեն տալիս ինձ:

ՉԱՐՄԱՔ

Հնգամյա Սամվել որդիս թերթում է «Արցախ» հանդեսը: Փորձում եմ բացատրել նրան, թե որտեղ եմ աշխատում ես.

-Գիտե՞ս, տղաս, ես, այ, այդտեղ եմ աշխատում,-ասում ու հանդեսն եմ մատնացույց անում:

-Հա՞,-գարմանում է Սամվելը,-պապ, բա ո՞նց ես մտնում թղ-թի մեջ...



ԼԿԼԸԼ ԱՆԵԿՈՍՆԵՐ



1995-ի հուլիսի 1-ին Կենտրոնական պաշտպանական շըր-ջանից տեղափոխվեցի «Մարտիկ» թերթի խմբագրություն՝ զին-ծառայությունս շարունակելու որպես զինվորական լրագրող, բայց տեղափոխման հրամանը զորամաս հասավ յոթ օր ուշացու-մով: Նույն օրն էլ՝ հուլիսի 7-ին, զինվորական հետագա ծառայու-թյան վայր ներկայացա:

Թերթի գլխավոր խմբագիրն ասաց.

-Յոթ օր ուշ ես ներկայացել զորամաս: Ֆինբաժնի պետին պիտի հայտնեմ, որ յոթ օրվա աշխատավարձդ պահի:



Ծառայության նոր վայրում, հենց առաջին օրը, գլխավոր խմբագիրը կայելով ավագ լեյտենանտի ուսադիրներին՝ ասաց.

-Գիտե՞ք, պարոն ավագ լեյտենանտ, Ձեզ պիտի աստիճա-նագրկենք մեկ «աստղով», որովհետև հիմա լեյտենանտի հաս-տիք եք զբաղեցնում:

Պետք է խոստովանեմ, որ գլխավոր խմբագիրն, իրո՞ք, հասավ իր նպատակին, թեև դրա համար ութ ամիս պահանջվեց: Արդյունքում՝ ես ոչ թե մեկ «աստղով» աստիճանագրկվեցի, ինչ-պես խոստացվել էր, այլ՝ լրիվությամբ «աստղաթափ» եղա:



Նոր գլխավոր խմբագիր նշանակվեց: ՊԲ կադրերի բաժ-նից հրահանգեցին՝ լուսանկարվել անձնական գործի համար: Բայց քանի որ սպայական կոչում առայժմ չունեի՝ չգիտեի ինչ կոչումով լուսանկարվել: Նոր նշանակված սպային սովորաբար լեյտենանտի կոչում է շնորհվում, բայց քանի որ ինքը առավել փնտրված կադր էր և բավականին տարիքով, որոշեց, որ իրեն կապիտանի (վատագույն դեպքում՝ ավագ լեյտենանտի) սպայա-կան կոչում կշնորհվի, ուստի կանչեց խմբագրության ֆոտոթղթ-թակից Աշոտ Երամիշյանին և հրահանգեց լուսանկարել նախ՝ կապիտանի, ապա՝ ավագ լեյտենանտի ուսադիրներով:

-Աշոտ, գուցե լեյտենանտի ուսադիրներով է՞լ լուսանկարես, կարող է՝ հանկարծ լեյտենանտի կոչում տան,-կասկածեց գլխա-վոր խմբագիրը:

Կասկածանքն արդարացավ՝ լեյտենանտի՛ կոչում շնորհվեց:





Մեկնում ենք զորամաս:

-«Մարտիկ» թերթից ենք,-Ֆոտոթղթակից Աշոտ Երամիշյանն ու ես ներկայանում ենք Հսկիչ-անցագրային կետում՝ զորամասի տարածք մտնելու թույլտվություն ստանալու համար:

Հսկիչ-անցագրային կետի հերթապահը կապվում է վերադասի հետ.

-Մարտիկի տղաներից եկել են, ի՞նչ անեմ, բաց թողնե՛մ...



Չանգում եմ Նորոզման-վերականգնողական առանձին բազայի հրամանատար, փոխգնդապետ Մարտիկ Հայրապետյանին.

-«Մարտիկ» թերթից են անհանգստացնում Ձեզ,-ասում եմ:

-Մարտիկը լսում է «Մարտիկին», ինչո՞վ կարող եմ օգտակար լինել,-անմիջապես լսվում է պատասխանը:

ԴԴՆԵՐ N ԶՈՐԱԿԱԿԻՑ



Շարքային Հայկ Դուկասյանը հարազատներին շուտ-շուտ է նամակներ գրում: Իսկ բոլորովին վերջերս նամակներից մեկում գրել էր. «Մայրիկ ջան, սուտ է, որ ասում են, թե իբր Հայոց բանակում սպաներն ամեն օր ծեծում են զինվորներին: Ինձ, օրինակ, այսօր չեն ծեծել»:



Վաշտի ավագը մտնում է զորանոց:

Հերթապահը ներկայանում է:

-Այս ի՞նչ տհաճ հոտ է,-հարցնում է ավագը:

-Պարոն ավագ, մինչև Ձեր գալը ոչ մի հոտ էլ չկար,-փորձում է արդարանալ հերթապահը:



ԵՌԵՐՈՒՄ ԱՐՇԱԿԻ ՀԵՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՆԱԿՆԵՐԻՆ ԵՐ...

Երգիծապատումներ

*1989-ի հեռուստաերթից, հեռուստասցենարներից
և հեռուստատեսության կյանքից՝ առհասարակ*



Տեխնիկական խոտան էր, չէին կարողանում եթեր դուրս գալ: Եվ, ահա, երկնագույն Էկրանին վերջապես երևաց հաղորդավարուհին.

-Հարգելի հեռուստադիտողներ, տեխնիկական խաթարումների պատճառով ներողություն ենք խնդրում,-ասաց նա և շարունակեց հեռուստաերթը:



Կադրում՝ երեխաներից որևէ մեկը արտասանում է որևէ բանաստեղծությունից որևէ քառատող:

«Բժիշկ-մանկավարժի մեկ օրը» հաղորդման սցենարից



Կադրում՝ թղթակիցը մտածկոտ քայլում է Ստեփանակերտի փողոցներով... Տեսախցիկը ցուցանակից շոջվելով՝ ընդգրկում է ամբողջ փողոցը և շարժվում առաջ... Փողոցը կամաց-կամաց մթնում է, ապա՝ կամաց-կամաց լուսանում: Էկրանի վրա երևում է սեղանի մոտ նստած թղթակիցը՝ ձեռքում բռնած մի գրություն. «Մուկուչ Արզանյանը եղել է բացառիկ համեստ և հասարակ ընկեր»:

«Մեծ պայքարի մարդիկ» հաղորդման սցենարից



Ռեժիսորին՝ Սրբազանը գալու է հինգշաբթի օրը: Խընդրում եմ նկարահանման *հացը* արագացնել:

Սակագրություն «Եւ մի տանիք զմեզ ի փորձություն»

հաղորդման սցենարի վրա





Կադրում՝ Նևգի գյուղը՝ խոշոր պլանով: Կուժ, գավաթ, խնոցի՝ խոշոր պլանով: Գյուղի բրուտանոցը՝ ընդհանուր պլանով: Գյուղի ծեր կանայք՝ խոշոր պլանով:

Վարպետ Վարդանը ներկայացնում է բրուտագործական իրերը, իսկ Աշխեն տատիկը՝ խոշոր պլանով...

«Մոռացված արհեստ» հաղորդման սցենարից



Եթե ոչ հեռու անցյալում երիտասարդները դժկամորեն էին ֆերմա գալիս, կամ բոլորովին չէին ուզում, այսօր արդեն անասնապահների ու կթվորների շարքերը համալրվում են նոր ու բանիմաց կադրերով, որոնց մեծ մասը երիտասարդներ են: Ի՞նչն է պատճառը, որ երիտասարդները հանկարծ կանգնեցին դեմքով դեպի... ֆերման:

«Դեմքով դեպի ֆերմա» հաղորդման սցենարից



Կադրում՝ քաղխորհրդի գործկոմի շենքը: Ընդհանուր միջանցք: Ընդունարանում սպասող մարդիկ: Նրանց դեմքը: Հետո կամերան մտնում է քաղգործկոմի նախագահի տեղակալի աշխատասենյակը: Աշխատասենյակ է մտնում նաև մի քանի քաղաքացի, իսկ հեղինակը մի քանի խոսքով կադրի (կամերայի) հետևից ներկայացնում է տվյալ անձնավորությանը: Օրինակ՝ Այսինչ Այսինչյան, Ստեփանակերտ է տեղափոխվել Բաքվից 1989-ի հունվարի կեսերին, ունի չորս մասնագիտություն, երեք երեխա և մեկ կին:

«Մի օր քաղգործկոմում» հաղորդման սցենարից



Կադրում՝ Պողոսագոմեր գյուղը: Կամերան գյուղամիջով գալիս-մտնում է 103-ամյա ծերունու տունը, ծերունու դեմքը:

«Հին զինվորը» հաղորդման սցենարից



Կադրում՝ Պողոսագումեր գյուղը: Պատկերներ գյուղից:
Ծերունիներ գյուղից:

«Սովորական ու անսովոր» հաղորդման սցենարից



Մայքլ Ջեքսոնը... Ստեփանակերտում, Մարտակերտում,
Հաղրութում ու... Շեխերում,- մարզի մյուս քաղաքներում, ավան-
ներում ու գյուղերում:

«Արցախյան հյուրախաղեր - 89» շարքից



*Ավտովարորդ Յուրի Հակոբջանյանը պատմում է, որ Ար-
փագետունյ գյուղում նկարահանումների ժամանակ տեղի ունե-
ցած այսպիսի մի խոսակցության է ականատես եղել.*

-Ասում են՝ «դուբյունկաներ» եք ստացել ու տվել թուրքեր-
ին, ճի՞շտ է,- կովվարչության նախագահին հարցով դիմում է հե-
ռուստատեսության թղթակից Սասունիկ Ալեքսանյանը:

-Այո,-կարճ պատասխանում է նախագահը:

-Ինչո՞ւ...

-Որովհետև նրանք են աշխատում մեր ֆերմայում: Դու ե-
րեք օրով արի փոխարինիր մեր կթվորուհիներից որևէ մեկին՝
«դուբյունկան» ետ վերցնեմ ու տամ քեզ:

-Չէ, չէ, չեմ կարա,-հրաժարվում է թղթակիցը:

-Դե՛ որ չես կարա,- ջղայնացած գրույցին է խառնվում
Հաղրութի շրջխորհրդի գործկոմի նախագահը:

-Դու սո՛ւս, թե չէ՛ հրես մի սինխրոն կտամ, կմնաս տեղդ
կանգնած,-ասում է թղթակիցն ու խոսափողը մոտեցնում շրջ-
խորհրդի գործկոմի նախագահի բերանին:

Նախագահը մնում է շշկված-կանգնած...



«Երգիծական հեռաբխ»-ի

ՋԱՂԱՎԵՆՆԻՐ

ԿԵՆԱՂՈՐԾՈՒՄ ԵՆՔ ԽՄԿ 28-ՐԴ ՀԱՂՈՒՄԸՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ոգևորված ԽՄԿ 28-րդ համագումարի պատմական որոշումներով, այս տարվա առաջին եռամսյակում Խորհրդային երկրի գյուղատնտեսական ոլորտի աշխատողներն արտադրել են շուրջ 4 մլն տոննա միս, որի վաճառման և վերավաճառման անօրինակ արարողությունը վերջացնելուց հետո երկրորդ եռամսյակում մսավաճառները գրպանել են 4 մլն ռուբլի փող, իսկ երրորդ եռամսյակում որոշել են վաճառել մնացած ոսկորները:

Սոված մարդկանց կարագով, մսով, ձվով, կաթով և այլ մթերքներով բավարարելու նպատակով որոշվել է 1990 թվականի դեկտեմբերից անցնել ինքնաձիգաձեռնարկ: Այսինքն՝ բյուրոկրատական ապարատի աշխատողներն այսուհետ աշխատելու են այնքան, որքան ուտում են:

Քանի որ խորհրդային կուսակցական լիդերներն այլևս մարզ չեն գալիս, Արցախի գյուղատնտեսության աշխատողները ուրոշել են այս տարի չօգևորվել ոչ մի համագումարի ոչ մի որոշմամբ և իրենց արտադրած մթերքները չուղարկել այլևս Սուբալիբովին, Սաֆոնովին, Պոլյանիչկոյին և նման այլ անկուշտ ձրիակերների: Չարմացած այս հանգամանքից՝ կաթնատու-մսատու կովերը հավերժական ոգևորությունից ուշքի եկան և սկսեցին պոզահարել այն կթվոր-կթվորուհիներին, ովքեր իրենց սոված ա-

Նարատ կաթին ջուր խառնելով՝ ֆուրաժային կովի կաթնատվությունը հասցնում էին 4, 5, 6, 7, նույնիսկ՝ 8 հազար լիտրի և ուրիշի մաքրությունը կեղտոտելու հաշվին ոսկե մեդալներ շահում, կոմունիստական աշխատանքի հարվածային դառնում, իսկ լավագույն դեպքում՝ արժանանում սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման:

Ցնծության մեջ են առանձնապես՝ հավերը, որոնք դեռևս երկու տարի առաջ էին ուզում արտասահմանյան անձնագրեր ձեռք բերել և փախչել Ամերիկա:

Հիմա Կևորկովը, Ալինը, Բրեժևը (ողորմի նրան) էլ Արցախ չեն գա, իսկ ֆերմաների վարիչներն էլ իրենց (հավերին) չեն ստիպի հիևզ կոպեկանոց կեր ուտել ու ածել... տասնհինգ կոպեկանոց ձու:

Քանի որ լուրեր են պտտվում, որ Խորհրդային միությունում շուտով կարող է սով սկսվել և տալոսով կլինեն հացը, ջուրը, ձուկը, աղը, կաթը, պանիրը, մածուկը, նույնիսկ՝ օդը (Օ.), անհրաժեշտ ենք համարում հիշեցնել բնակչությանը, որ այսուհետև պետք չէ համագումարի որոշումներ կարդալ ու նրանցով ոգևորվել:

Ավելի ճիշտ ենք համարում հողը վարձակալությամբ վերցնելն ու մշակելը:

1990, սեպտեմբեր, Ստեփանակերտ

ԲԼՂԱԲԼԿԱՆ ԲԼՂԱՐՂԱ

Այլմոլորակայիններ – Ըստ ադրբեջանական բուֆ պատմաբանների՝ ժողովուրդ, որն ապրում է Արցախի ներկայիս տարածքում:

Երկրաշարժ – Տեղի է ունենում ընդերկրյա ցնցումներից, որոնք վերջին ժամանակներս կապված են նաև քաղաքական ցնցումների հետ:

Էքստրենսիստներ – ԽՍՀՄ-ում ապրող օկուպացված տարածքի բնակիչներ (ազգությամբ՝ հայ, քանակը՝ 3 մլն):



ԽՍՀՄ – Լայնարձակ երկիր, որտեղից փախչելու համար նրա քաղաքացիները տասն օրը մեկ ինքնաթիռ են փախցնում:

КПСС – Кaнaм нepecтpо́ўкa – cнacyme Coюз!

Կտրոն (նախնական պատվերի) – Ծաղկող սոցիալիզմին հատկանշական փաստաթուղթ:

Корруппированные элементы – Ոչ քիմիական տարրեր, որոնք Մենդելեևի պարբերական աղյուսակում չկան: Վերջերս հայտնաբերվել են Արցախի տարածքում կենտրոնական իշխանությունների կողմից: Հետաքննությունը շարունակվում է:

Նոր մտածողություն – Ստքերի ամբողջականություն, որին հատուկ է ցանկացած պարագայում իր արտաքին տեսքը փոխելու և որակական նոր ձևով հանդես գալու ունակությունը:

Перестро́йка – Պետության վերափոխման իրականացումն ապահովող որոշակի համակարգ, որը կարող է ուղեկցվել **нepecтpо́ўкa** - յով:

Ուզմական դիկտատուրա – Քաղաքական կարգավիճակ, որը Չի-լիում կոչվում է Պինոչետի դիկտատուրա, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում Պրետորիայի ռասիստական ռեժիմ, Արցախում արտակարգ դրության պարետություն:

СССР – Страна страждующих Социалистической революции.

Սումգայիթ – Խորհրդային քաղաք, որտեղ բնակարանների պակասության պատճառով թուրքերը կարող են սպանել բնակարանատեր մարդկանց (ծնթ.՝ հայերին) և քաղաքին շնորհել ինտերնացիոնալիստի կոչում:

Փտող կապիտալիզմ – Ինքը փտում է, հոտը մեզկից է գալիս:

1990, օգոստոս-սեպտեմբեր, Ստեփանակերտ



ՊԼՏՈՒԽ Ե ՎՐԵՋ ԱՐԱՐԱՏՅԱԼԸ



Բախտագուշակ գնչուհին Սութալիբովին մահից հետո դրախտ է խոստանում, իսկ Սաֆոնովին՝ դժոխք: Այնպես է պատահում, որ մահից հետո երկուսն էլ դրախտ են ընկնում: Սութալիբովը զարմանքով հարցնում է Սաֆոնովին.

-Ո՞րք եղավ, որ դու էլ դրախտ ընկար:

-Ձերոնց տված փողերով կաշառեցի գերեզմանոցի պահակին՝ ինձ էլ դրախտ ուղարկեց,-պատասխանում է Սաֆոնովը:



Մի արցախցի մտամոլոր քայլերով մտնում է Մոսկվայի կենտրոնական հանրախանութը և սկսում նայել ցուցափեղկերը: Վաճառողուհին մոտենում է նրան ու հարցնում.

-Что Вы хотите, молодой человек?

-Մի-ա-ցո՛ւմ,-մտքերից չկտրվելով բացականչում է արցախցին:

-Эмо очень дорого стоит! - պատասխանում վաճառողուհին:



Տարիներ անց մի լենինականի պատահմամբ հանդիպում է Սաֆոնովին՝ մարշալի ուսադիրներով:

-Ծո՛ւ, ես պագոնները երբ ստացար որ,-զարմացած բացականչում է լենինականցին:

-Սյասին քյան (ծայնդ կտրիր), а мо прикажу нове-суть,-հետևում է պատասխանը:

1990, օգոստոս, Ստեփանակերտ



Արատարարում

Փարվանս

(PARODIA-ներ ԱՂԵՐԻ ԵՂԱՎԿՈՎ)

ԱՌԱՋԻՆ ԵՌՕՐՅԱ

Խոսնակ.

-Ներկայացնում եմ այս եռօրյայի թեման:
Բոլորս քաջ գիտենք Փարվանայի պատմությունը:
Գիտենք իր երազային ասպետին սպասող
երազանուշ այն աղջկան, «շտապելուց թև առած»
ու «թեթև թիթեռներ դառած» Փարվանա կտրիճներին,
որ... «ջանք է անում ամեն միևր,
շուտով տակի, տիրանա,
ու այրվում են, այրվում անվերջ»...
Բայց, պատկերացնենք,
որ աղջիկը «սեր-ընկերից իր կյանքի»
պահանջում է ոչ թե անշեջ հուր, այլ... երգ:
Մեր բանաստեղծներից ամեն մեկը
երևի յուրովի կմեկնաբաներ դա:
Եվ, այսպես, ուշադրություն,
միացնում եմ առաջին խոսափողը:
Ուզում եմ նախ խոսքը տանք
հանճարեղ «Փարվանայի» հանճարեղ հեղինակին:



Առաջին խոսափող՝ Հովհաննես Թումանյան

ԳՈՒՍԱՆՆԵՐԸ ՓՂՎԱԿԸ

...Ասում են՝ Էն գուսանները,
Որ գիշերվան խավարում
(Երբ խրախճանք ու սիրո երգ,
Սիրո մեջլիս է լինում),

Հավաքվում են, շուրջը պատում
Երգ-նվագով խելագար,
Եվ ասում են, թե Փարվանա
Էն գեղուհու սիրով վառ

Տանք է անում ամեն մինը՝
Շուտով տանի, տիրանա,
Ու երգում են, երգում անվերջ
Գուսանները Փարվանա,

Սակայն սիրո երգը անշեջ
Երբեք չկա, ա՛խ, չկա,
Ու այրվում է, այրվում անվերջ
Սիրտն Էն դժբախտ աղջկա...

26-27.08.82, Սարտակերտ



ԳՈՒՄԱՆՆԵՐԸ ՍԻՐԱԿԱՐՎԱԾ

1

Հեռո՛ւ, մոտի՛կ գուսաններին, աշխարհներին, արևներին,
հրանման հոգիներին:

Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ՝

Փարվանա կույս գեղեցկուհու սիրո համար:

Եվ անշեջ երգ որոնող մեր գուսանների

Ողջակիզվող հոգիներին՝ ողջո՛յն, ողջո՛յն:

2

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն:

Արևը բորբ լուռ մայր մտավ արևմուտքում:

Դաշտի վրա կամաց-կամաց լուռ համրացան

Կարմիր փայլով վերջին շողերն արեգական,

Ու մութ փովեց դաշտի վրա արյունամած,

Մութ ու մշուշ՝ բորբ արևի լույսից քամված:

Ծո՛վ էր կարծես դաշտն անսկիզբ ու անսահման,

Ծո՛վ էր անհուն՝ տարված երգով գուսանական:

3

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված,

Այդ հին դաշտում մրցում էին գուսանները սիրահարված:

Քաղաքներից ու գյուղերից, կալվածքներից հեռու ու մոտ

Եկել էին նրանք սորից հուսավառված ու կրակոտ:

Համակ հույզ էր սերը կույսի, որ դարձրել նրանց գերի,

Նետել էր կույր քմայքներին ու հույզերին երազների:

Ու մրցում են գուսանները հանուն կյանքի, հանուն սիրո,

Գեղեցկուհու սիրո հանդեպ տաճած քնքուշ երազներով:

Անշեջ երգը այստեղ բերել ու բավիղում ճանապարհի

Նենգ դևերին պահ է տվել տիրակալը մութ աշխարհի,

Ինքը՝ չքվել գաղտագողի: Դեռ մրցում են գուսանները,

Ով որ անշեջ երգը բերի՝ նա է կույսի սրտի տերը:



4

Մրցում էին ու մրցելով երգում էին նրանք արի՝
Նման քնքուշ սեր-սրտի տեր մի դեռահաս սիրահարի:
Երգ էր սիրտը ամեն մեկի, երգ էր՝ հայա՛ցք, երգ էր՝ կարո՛ւտ,
Վառվում էր սիրտն ամեն մեկի՝ որպես կարմիր մի առավոտ:
Երգ էր կարծես արևն էլ հին՝ այդ հին դաշտում արյունամած,
Ու երգելով մրցո՛ւմ էին գուսանները սիրահարված:

5

...Գիշերի դեմ լո՛ւյս է պայծառ՝ լուսապայծառ նրանց հոգին,
Որ կարոտով մի կրակոտ սպասո՛ւմ է առավոտին:
Երգ է ու սեր սիրտը սոցա, և այդ երգում անծա՛յր, անծի՛ր,
Երկինքներ կան կապուտաչյա, հորիզոններ անծայրածիր:
Նրանց ձգված մկաններում ուժն է լստել խոնավ հողի:
Եթե ուզեն՝ երգով կառնեն անգամ ճամփան հարթագողի,
Եթե ուզեն՝ մուֆ աշխարհի տիրակալին դների հետ
Կշարտեն երկինքն ի վեր՝ փրկած անշեջ երգը հավետ:
Եթե ուզեն՝ Փարվանա կույս գեղեցկուհու սիրով վառված՝
Ինչե՛ր միայն չեն կատարի գուսանները սիրահարված:

6

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում արևատես
Երևում էր դաշտը բոսոր՝ կարմիր վառված արևի պես,
Նոր հույզերով, երազներով, ձգտումներով՝ վառված-տարված,
Դո՛ւրս նետվեցին թաքստոցից գուսանները սիրահարված:
Դեմը՝ դաշտն էր անծայրածիր, ճանապարհը արևագույն,
Որ նիրհում էր քնաթաթախ առավոտի մարմանդ միգում:
Հեռվից-հեռու՝ բավիղներում այդ հեռահար ճանապարհի,
Երևում էր դների հետ տիրակալը մուֆ աշխարհի:
Արշավում են գուսանները դեպի կռիվ ու հաղթանակ,
Իրենց երգով կործանելով թշնամական քանի՛ բանակ:
Շուրջը՝ մահ է, ավեր, արյուն, բայց գնում են նրանք էլի՝
Նվաճելու նոր հաղթանակ, տիրելու նոր բարձունքների:
Գնում են, որ հուր-հավիտյան ճանապարհը փակեն չարի՝
Մահին տալով դների հետ տիրակալին մուֆ աշխարհի:
Գտնեն նորից անշեջ երգը և Փարվանա կույսին տանեն,
Որ տիրանան կույսի սիրուն՝ գուսանները մեր հանճարեղ..

24.10.82, Մարտակերտ



Երրորդ խոսափող՝ Հովհաննես Շիրազ

ԳՈՒՍԱԼԼԿԼԼ

Եվ երզն այն է, որ ծնվում է ակնթարթում իմաստուն...

Երբ անհայտ ոգին աշխարհն արարող,
Որ Աստված կոչվեց դարեր ու դարեր,
Ստեղծեց երկինք, արև, ծով ու հող,
Ստեղծեց համայն տիեզերքը մեր,
Եվ աշխարհ բերեց բիրտ հողից մարդկանց,
Մեկ-մեկ բաժանեց բարիքը անհուն,
Փարվանա կոյսին՝ երբ աշխարհ բերեց՝
Նոր զգաց՝ երգ է հարկավոր մարդուն:
Ու նա ստեղծեց գուսաններ բազում,
Որ գևան անշեջ երգը որոնեն,
Բայց... չէր ստեղծել դեռ երգը անշեջ,
Էլ գուսանները որտեղի՞ց գտնեն:
Ու չգիտեին գուսանները դա,
Ու փնտրում էին անշեջ երզն անվերջ,
Փնտրում լեռներում, երկևքում, ծովում:
Փնտրում էին... Ու չկար երզն անշեջ
Ո՛չ երկրի վրա, ո՛չ երկնի մովում:
Ու տարակուսած Աստծո մոտ եկան:
-Դու անշեջ երգը դեռ չե՞ս ստեղծել,
Թե ստեղծել ես՝ որտե՞ղ է, չկա՛,
Թե ստեղծել ես՝ ո՞վ է թռցրել...
Ու ծիծաղել է Աստվածը քահ-քահ,
Միամիտ մարդու խելքին միամիտ.
-Այս երկևքի տակ անշեջ բան չկա՛,
Սի՛ր հավատացեք, միամի՛տ մարդիկ...

21.09.94, Ստեփանակերտ



ՅՈՑ ԴՈՒՍԱԼՆԵՐԻ ԲՎԼԼՈՂԸ

*Երանի՛ւ նրան, ով ծերացել է
Ու սիրահար է մնացել դեռ...*

|

Յոթ օր խորհեցին երագին հլու,
Ու հեծան յոթ ծի՛ յոթ արի գուսան,
Յոթն էլ՝ վառ սիրով չքնաղ տիրուհու,
Յոթ երագներով յոթ ճամփա ընկան:
Յոթ օր, յոթ գիշեր ճամփա գնացին,
Յոթ մազե կամուրջ, յոթ մահով անցան,
Յոթերորդ օրվա իրիկնաժամին
Յոթգլուխ դևի դոյակին հասան:
Յոթգլուխ դևը յոթ անգամ հագաց,
Յոթ անգամ՝ ռեխը բացուխուփ արեց,
Յոթ գլուխներին իջավ յոթ հարված
Ու յոթգլխանին յոթ շունչն էլ փչեց:

Նորից յոթ լուսե երագով գերված՝
Յոթ ճանապարհով առաջ սլացան,
Բայց անշեջ երգը չկա՛ր ու չկա՛ր...
Եվ դատարկածեռն ետ վերադարձան:

?

- Անշեջ երգը չկար: Շատ փնտրեցինք՝ չկար:
Որտեղ եղանք՝ չկար: Ում հարցրինք՝ չկար:
Լուսաբացին՝ չկար: Երեկոյան՝ չկար:
Արդեն յոթ գիշեր էր ու յոթ օր էր՝ չկար:
Կորել էր ու չկար: Կորե՞լ, ասեղ հո չի՞,
Տեսված բա՛ն էր, արոյոք, անշեջ ե՛րգն էլ կորչի...
...Պարսպի մոտ խմբված իշխանական մեծ տան՝
Գանգատվում են իրար յոթ հանճարեղ գուսան:

3

Ու լսում է նրանց լուռ
Փարվանա կոյսը տխուր՝
Սիրտն արյուն-լաց էր.
-Ո՞ր մնացին, գուսաններ,
Զորությունն ու ձիրքը ձեր՝
Երբ աչքս թաց է:
Մի՞թե չկա անշեջ երգ,
Ու չեք կարող դուք երբեք
Փակ սիրտս բացել...

...Ու թախծում է այսպես լուռ
Փարվանա կոյսը տխուր...

4

...Եվ ասում են՝ շատ դարեր
Սպասում է կոյսը դեռ:

Գուցե ինչ որ մի լավ օր
Գուսանները ձիավոր
Վերադառնան ավարով՝
Բերեն անշեջ երգն ու տան
Այդ լուսեղեն աղջկան,
Որ այդ երգի հաճույքից
Նրա փակ սիրտը բացվի,
Աչքը ժպիտ տեսնի միշտ՝
Արյուն-լացից չթացվի...
03.10.82, Ստեփանակերտ

«ՓՈՐՎԱՆԱ» ԼԵՊԵՆԴ

Եվ գուսանն ինչքան էլ ցանկալի,
Անշեջ ե՛րգն է թանկագին, դու գիտե՛ս...

-Ով գտնի ու բերի անշեջ երգը սիրո
Ու գերի իմ սիրտը երգո՛վ այդ,
Ես նրան կընծայեմ իմ թագը մեծ սիրով
Ու կօծեմ արքա-արքայաց...

...Գուսանը չգնաց անշեջ երգ գտնելու,
(Դե, սիրտն իր երգով վարարուն է),
Աներեր է կամքը Փարվանա տիրուհու,
Գուսանը հանկարծ... վարանո՞ւմ է:

Գուսանի սագի պես հուզված է խիզանը,
Հուզված է տիրուհին Փարվանա,
Երգում է իր կարոտն ու սերը գուսանը,
Որ երգով իր սիրուն տիրանա:

-Ո՛վ գուսան, անշեջ երգ չգտար թեկուզ, բայց
Սագդ սիրտս հիմքից շեղե՛լ է...

...Ու հիմա չգիտեմ՝ «Փարվանա» լեգենդն այս
Լեգե՞՛տն է արդյոք, թե՞՛ եղել է...

11-27.09.82, Սարտակերտ

Խոսնակ.

-Մեկնաբանությունները, կարծում եմ, ավելորդ են:
Սիայն ավելացնեմ,
որ ելույթների «ծայնագրման գործը» շարունակվում է:
Եվ ում այսօր խոսափող չտրամադրվեց՝ թող շատ չտխրի,
զինվի համբերությամբ ու սպասի...
Իսկ հերթը, հուսով եմ, շատ չի ուշանա...
Հաջողություններ եմ մաղթում բոլորիդ:
Կհանդիպենք հաջորդ եռօրյայի ընթացքում:



ԵՐԿՐՈՐԻ ԵՌՕՐՅԱ

Առաջին խոսափող՝ Վարդան Հակոբյան

ԱՆՍԵՆԻ-ԱՆՊԼՏՄԵՆԻ

*Իսկ անշեջ երգը գտնելու համար
Դուք այն միշտ փնտրեք վաղվա՛ն աչքերով...*

Կանգնել, ահա,
Գովքն եմ լսում Փարվանա կույս գեղեցկուհու՝
Պապիս պապի նախապապի գուսան քեռուց:
Պատմում է նա գեղեցկուհու
Անլսելի-անպատմելի գեղեցկության,
Երա հանդեպ տաճած անկեզ սիրո մասին.

-Փնտրել եմ ես գիշեր-ցերեկ, փնտրել եմ ես երկար-երկար,
Բայց ոչ մի տեղ, ոչ մի երկրում երբեք անշեջ երգը չկար,
Այնպես լինե՛ր՝ անշեջ երգով քեզ հարս տանել կարենայի,
Անշեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Ուշք ու միտքդ անշեջ երգին, ամեն, ամեն ինչ մոռացած,
Քանի՛ գուսան ուղարկեցիր, սպասում ես դեռ դալկացած,
Ես էլ գնամ... Շա՛տ կուզեի անշեջ երգով գիրկդ գայի,
Անշեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Ես առանց քեզ ինչպե՛ս ապրեմ՝ իմ արևը, շունչը դու ես,
Գնամ գտնեմ: Երգը անշեջ մեկ ուրիշը երբ բերի քեզ՝
Չեմ դիմանա, քեզ կորցնելու միտքը անվերջ սիրտս կայրի,
Անշեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Շա՛տ փնտրեցի, քանի՛ աշխարհի, քանի՛- քանի երկիր մտա,
Քանի՛ չքնաղ գեղեցկուհի, քանի՛ սեր ու երազ գտա...
Բայց ուր եղա՛ դու աչքիս դեմ, դու մտքիս մեջ միշտ էլ կայիր,
Անշեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Այնպե՛ս լինե՛ր, որ գտնեի՛... Ես երջանիկ կլինեի,
Երբ գտնեի անշեջ երգն ու իսկույն այն քեզ նվիրեի,
Դու ժպտայիր ուրախ ու գոհ... Գրկիս մեջ քե՛զ ունենայի,
Անշեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:



ԱՄԵՆԻՑ ԼՊԼՏ...

Ամենից առաջ,
Ամենից առաջ,
Խոհեմ եղիր քիչ,
Եվ ուրիշ ոչինչ...
Բռնիր դու ձեռքից այն կույր ծերունու,
Որ գուցե իսկի գուսան չէ բնավ,
Բայց թառ ու սազ է կարգին նվագում:
Գիտե նաև ոնց տիրել սրտերին,
Հատկապես՝ կնոջ:
Իսկ Փարվանա այն տիրուհու մասին
Արի չխոսենք:
Բան ու գործ թողած
Ես չեմ ընկնելու սարեր ու ձորեր,
Թե ինչ է՝ անշեջ երգն եմ փնտրելու,
Ուրիշ գործ չկա՞...

Չկա՞...
Դու արի՛,
Ես գործ կճարեմ...



Փրկվե՛ք

Կանգնել եմ Փարվանա տիրուհու առաջ:
Ծաղկած բալենի է հիշեցնում նա,
Իսկ շփոթահար իմ հայացքից
Թախիժ է ծորում անըմբռնելի, անվերձանելի...
Այս ո՞ր գուսանը նրան
Բերեց անշեջ երգը սիրո:
Թե՞ դեռ կարգին չայրացած
Արևորդուց առաջին համբույրն ստացավ
Ու մայրացավ անմիջապես,
Իսկ ո՞ւր մնաց սերը:
Խաբվել է, երևում է,
Որ մենակ է հիմա,
Եւ խեղճ ու անօգնական է զգում իրեն...

Հեռվում նորից ձյունել են սարերը,
Իսկ ծաղկած բալենի-փարվանուհու սրտում
Գարունն ու ձմեռը միախառնվել են իրար...

...Փարվեմ փարվանուհուն՝
Գուցե մի քիչ զգա սիրո հրապույրը:
16.05.08, Ստեփանակերտ



ՔԻՏԻ ԵՐԳ Է ԱՇԵՏ...

Ես անծրև չեմ ուզում,
Եվ ոչ էլ ուզում եմ իմանալ
Գույնն անծրևի:
Ես քո ժպիտն եմ ուզում,
Իսկ քո ժպիտը երգ է,
Գուցեն՝ ոչ անշեջ...
... Թե չես կարող գտնել
Անշեջ երգը սիրո
Ու բերել ինձ նվեր՝
Գունե... ժպտա...

ՃԱՆԱԿԱՐԻՍ...

Ճանապարհս՝ քո երագով եմ հյուսել ես,
Ու նետել հորդ հորձանքի մեջ ապագայի,
Ես միտք չունեմ հեք որսալու և ոչ էլ... սեր:
Այլ՝ անշեջ երգ,
Այլ՝ անշեջ երգ...
Ես ճանապարհի ընկա՝ լույսը դեռ նոր բացված,
Ոչ մի գուսան չէր երևում դեռ ճամփեքին,
Ու գնացի երկա՛ր, երկար որոնելու՝
Անշեջ մի երգ,
Անշեջ մի երգ...
Փևտրում եմ ես իմ հուշերի լուսանցքներում,
Անշեջ երգը սակայն չկա, ես չեմ գտնում:
Ուր գնում եմ՝ քո ստվերն է ինձ հետևում...
Օ՛, գեղուհի,
Փարվանուհի...

ՀԻՍՏ ՏԱՔՍԻ ԿՎԱՐՁԵՄ...

Հիմա տաքսի կվարձեմ ու դուրս կգամ քաղաքից...
Կհեռանամ աղմուկից ու գրկում մայր բնության
Կփնտրեմ ես անդադար, մինչև գտնեմ ու տանեմ
Անշեջ երգը ես կրան՝ այն գեղուհուն Փարվանա:

Ես կվազեմ դեպի այն արևագույն բաշով ձին,
Կհամբուրեմ աչքերը այն ծիապահ աղջկա,
Կգրկեմ բաշը ձիու և սրընթաց վարգելով
Կանցնեմ սարեր ու ձորեր՝ անշեջ երգը գտնելու:

Ու կգտնեմ երգն անշեջ ես հանդերում մեր խոլոր,
Մեր սարերում ուրցաբույր, անտառներում կուսական,
Ու Փարվանա կույսի հետ անտառամերձ բացատում
Խոտերի մեջ բուրավետ՝ հաղթանակս կտոնեմ:

Հիմա տաքսի կվարձեմ ու դուրս կգամ քաղաքից...

ԱՇԽԵՏ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԿՈՒՇԱՆԻ ՓԱՐՎԱԼՆԸ

Ես վաղը կդառնամ մի գուսան իսկական,
Որ գտնեմ անշեջ երգև ու տանեմ այն աղջկան:

Բայց ասում են՝ դեռ վաղն եմ քառասուն տարեկան,
Իսկ, հիմա՞, դեռ փո՞քր եմ, քառասուն դեռ չկա՞մ:

Եվ մնում է՝ գևամ մեր բակում խաղալո՞ւ...
Ոչ, վաղն իսկական գուսան եմ դառնալու,

Որ գևամ ու երգև անշեջ գտնեմ ու տանեմ
Փարվանա այն չքնաղ տիրուհուն ընծայեմ,

Որ տա ինձ սերև իր ևս,
Տիրակալը դառնամ տիրուհու Փարվանա...

16.04.08, Ստեփանակերտ



ԷՊԻԳՐԱՄՆԵՐ և Ֆեյտերունիտեր

PARODIA ՀՈՎՀ ՌՈՒՄԱՆՅԱՆԻ «ԵՐԿՈՒ ԸԻՐԻՄ ԻՐԸՐ ԿԻՕ...» ԲԼՈՉԵԼԿԻ

Էյ, շիրիմներ իրար կից,
Հավերժական լուռ դրկից,
Ի՞նչ եք թախծում դուք այդպես՝
Թե ի՞նչ տարաք աշխարհից:
Լավ է՝ խորհեք ա՛յն մասին,
Թե ձեր թողած աշխարհից
Ի՞նչ է, արդյոք, մնում ինձ...

07.09.82, Ստեփանակերտ



ԷՊԻԳՐԱՎ-ՉՈՆ

*Հերիքնազ Հայրապետյան (թ. Երևան).
- Խմել եմ «Լուսաստղ» օղի, շահել...
ավտոմեքենա...*

Հայրապետյա՛ն Հերիքնազ,
Հերիք՝ այդպես... պարծենաա:
Դու, որ խմում ես օղի՝
«Լուսաստղ», թե խաղողի,
Նույնիսկ... ավտո ես շահել՝
Ինչո՞ւ էլի չխմել,
Անվերջ շահով չտարվել...
Իսկ վերջո՞ւմ... ի՞նչ... վթարվել...
Արդեն ո՞ւշ է խելքի գալ,
Թե՞ չես ուզում հավատալ,
Որ օղի կոնծելուց բացի
Շա՛տ գործեր կան կանացի...

17.09.02, Ստեփանակերտ



ՔԼՅՕ՝ ՀԼՎԼՏՈՒՄ Է...

Խեղճ Քաջ-Նազարն էլ կոմունիստ գրվել,
Դրոշը փոխել, ընկել է ճամփա,
Շատ է գնացել, քիչ՝ Աստված գիտե,
Բայց կոմունիզմը չկա ու չկա:

Չկա ու չկա: Բայց գնում է դեռ՝
Հյուծվել է Նազարն, հյուծվել է էշը,
Եվ... հավատում է, որ... տեղ կհասնի,
Թեև չի անցել դեռ... ճամփակեսը...

1990, Ստեփանակերտ

ԼԵՆԻՆԻ ԺՊՏԱԾՈՂ ԴԻՄԱԿԱՐԻ ԱՊԼՏ

Ժպտում ես՝
Ժպտա,
Ժպի՛տդ
Բարի,
Խղճո՛ւկ
Խեղկատակ
Մեր
Թշվառ
Դարի՛...

1989, Ստեփանակերտ



ՏՐԻՈՒՏ-ԱԿԿԱ

Մի ինքնագրի «խայամամոլի»

Ինչո՞ւ գայթի Նա՛ քեզ, ոմն Օմար,
Թեկուզ հանճար լինի, Խայա՛մ անգամ,
Երբ մենք Չարե՛ր նց ունենք պայծառ այսքան,
Ինչո՞ւ գայթի Նա՛ քեզ, ոմն Օմար...

Թեկուզ անցնի անկանգ միլիոն անգ ամ,
Պիտի ապրի այսպես անհաս ու հար...
...Ինչո՞ւ գայթի Նա՛ քեզ, ոմն Օմար,
Թեկուզ հանճար լինի, թեկուզ՝ Խայամ:

ԷՊԻԳՐԱՄ-ՏՐԻՈՒՏ

Նուսով եմ՝ դու քեզ կճանաչես...

Չեի՛ մեղանջի ես քո առաջ,
Թեկուզ լինեի՛ր դու գեներալ,
Եվ դեռ... կուզեիր ընկե՛ր մնալ՝
Չեի՛ մեղանջի ես քո առաջ:

Դու նե՛նգ ես, կավատ ու ռխակա՛լ,
Գոռո՛ղ ես, դաժա՛ն, բռի՛ ես՝ ա՛րջ,
Չեի՛ մեղանջի ես քո առաջ,
Թեկուզ լինեիր և... գեներա՛լ...

24.03.96, Ստեփանակերտ



ԿԼՏԻԿ-ՊԼՏԱԿԱՆ

-Սքանչելի տղա եմ, չէ՞...
Գ. Խ.

«Սքանչելի՛» ես դու իսկապես...
Իսկ եթե աղջիկ լինեիր՝
Քեզ ավելի շատ կսիրեի:
Սակայն քանի որ տղա ես դու,
Եվ այն էլ... այսպիսի՛ տղա,
Ես ասում եմ.
- «Կորի՛ր» աչքիցս,
Եվ աչքիս էլ մի՛ երևա...

03.01.96, Ստեփանակերտ

ԲԵՄԻ ՎՐԸ

(Ֆելիետոնի փոխադրեն)

Բեմի վրա համբուրվեցին աղջիկն ու տղան՝
Եվ պտտվեց բամբասանքը բերանից բերան:

Ու մի գիշեր նրանք ծածուկ գյուղից հեռացան,
Հեռու ու մեծ մի քաղաքում դարձան դերասան:

Իսկ երբ մեկ-մեկ գյուղ են գալիս կարոտով անհուն,
Եվ գյուղի հետ նախկին սիրով լուռ «ողջագուրվում»,

Գյուղը հրճվում ու ծփում է սիրով անսահման,
Զէ՞ որ ունի անուն հանաճ երկու դերասան...

20.08.82, Ստեփանակերտ



ՄԵՆԱԿՈՍՈՒԴՅՈՒՆ

(Լճացման հանրահայտ տարիների հուշ)

Աշխատում եմ մեր քաղաքի կենցաղկոմիսատում,
Հազարավոր բանվորներ են ձեռքիս տակ աշխատում:

Տևօրենս եմ կոմբինատի, դե, դեկավար մարդ եմ,
Ո՞վ կարող է իմ հասցեին ասել կոպիտ բառեր:

Մեր բարեխիղճ աշխատանքով անուն հանել մարզում,
Հեշտ ենք մենք մեր աշխատանքի արդյունքները մարսում:

Բանվորներս թող աշխատեն՝ նրանց փառք ու ծափեր...
Իսկ ես նստեմ հաշտ ու հանգիստ՝ առանց քրտինք թափել:

Մեկ է՝ լինեմ թե չլինեմ, գնալու է գործը,
(Այդ է ցուցում իմ մի քանի տարիների փորձը):

Նստեմ հանգիստ, տեսեմ ինչպես բանվորներիս խաբեմ,
Կտրեմ նրանց կոպեկները ու... ճաղատս շփեմ:

Շատ եմ ատում կարդացողին ու նախանձում թաքուն
Նրան, ով իմ կոմբինատում գրքով աչք է բացում:

Ու... չեմ ներում ընչաքաղցին՝ սնանկությունն հոգու,
Բայց ծննդյան իմ օրվանից ունեմ երկու... անուն:

Երկու անունն ինչի՞ն է պետք, չէ՞ որ մեկն էլ բավ է,
Մեկ լավ անունն երկու վատից հազար անգամ լավ է:

Բայց ի՞նչ արած՝ անձս, խիղճս ես տանուլ եմ տվել
Այն ժամանակ, երբ մեկի տեղ երկանուն եմ առել:

Ու, չգիտեմ, (պատասխանե՛ք, խնդրում եմ, իմ հարցին),
Ընչաքաղց եմ թեև մի քիչ ու սնանկ եմ կարգին,

Ե՛վ մեքենա, և՛ փող ունեմ ազնիվ (?) աշխատանքով,
Ասացե՛ք ինձ, խնդրում եմ, ես երջանի՞կ եմ արդյոք...

15.08.82, Ստեփանակերտ



«ՈՒՍՈՒՑԻՉԸ»

Երկու ամիս էր՝ ինչ ավարտեց,
Ուղարկվեց դպրոց՝ աշխատանքի:
Դպրոցը մեծ էր,
Զգտումը՝ մեծ:
Առաջին անգամ մտավ դպրոց,
Եվ առաջին հենց դասաժամին,
Դասագրքերը երբ որ տեսավ,
Վերցրեց, թերթեց անմիջապես:
-Այս ի՞նչ գրքեր են՝ գեղեցիկ, լավ,-
Վրա տվեց նա չտեսի պես,-
Այսպիսի գրքեր եթե կային՝
Ինչո՞ւ բուռում մեզ չէին տալիս:
Նման գրքերով բուռն անպայման
Մենք կավարտեինք... կես ժամկետում:
Եվ այս գրքերից կարելի է
Կշտանալ... նույնիսկ դեռ չընթերցած...
-Ի՞նչ,

Աղպե՞ս,
Սի՞թե...

Ասացե՛ք, ինդրեմ,
Գիրքն... ուտելի՞ք է, թե՞ գիտելիք...
Նա կմկմում է, բայց չի կարմրում.
-Դե, ինչպե՞ս ասեմ,
Դա՛՝ արդեն... նայած գրքին...

17.03.82, Ստեփանակերտ



ՏԵԼԵՏՈՒՒ ՓՈՒԿԷՆ

Փողոցում հանդիպեց պատահմամբ,
Բարևեց: Սեղմեցի ձեռքը.

-Ո՞ւց եք,

Ինչպե՞ս են գործերդ գնում...

-Օրերով չարչարվում անվերջ,
Չգիտեմք երբեք քուն, հանգիստ,

Աշխատում գիշեր ու ցերեկ,
Բայց էլի կիսաքաղց փորով

Ու էլի այսպես տկլոր ենք...

Մեր պետը, Ձեզ ինչպե՞ս ասեմ,

Փորին նոր մի փոր է դրել

Ու մեզ օր-ցերեկով խաբում է,

Բանվորներն աշխատում կիսաքաղց,

Իսկ ինքը՝ անհոգ լափում է:

Մինչև ե՞րբ, ասե՛ք ինձ, այսպես

Արցունքը հացի հետ ուտենք...

-Դուք անհո՛գ մնացեք,- ասի,-

Մենք հարցը կպարզենք տեղո՛ւմ հենց,

Ձեր պետը տույժն իր կկրի,

Չէ՞ որ երկիրն հիմա...

-Բանվորի՞նն է:

Եվ Դուք էլ այնպե՛ս եք խոսում,

Որ ասես, թե այս դարից չեք...

06.06.82, Ստեփանակերտ



ԻՔՐԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

Գիրք ունենալը ոչինչ չի հուշում:
Սովորել է պետք:
Երբ գիրքը ունես,
Բայց չես սովորում՝
Ունենալը էլ ո՞ւմ է հարկավոր...

17.03.82, Ստեփանակերտ

ԷՊԻԳՐԱՄ-ԴՆՏԱՄԽԷՆ

Յ.Կ.-ին

Իզո՛ւր ես դու արևի հետ
Վիճում, խեղճ ճրագ...

Քանի՛-քանի ճրագներ են
Վառվել ու մարել,
Իսկ արևը, դե՛ տեսնում ես,
Ապրո՛ւմ է դարեր:

1977, Դիլիջան



ՊԱՐՁԱՒԻՏ ԶՐՈՒՅԾ

-Արդեն մի ժամ է՝ կանգնել ես լուռ,
Ո՞րն ես դու, արդյոք, լուռ սպասում...

-Սպասում եմ ես՝ իսկ նա չկա,
Սակայն անպայման պիտի որ գա:

-Բանաստեղծո՞ւմ ես...
-Հեշտ է ասել,
Հապա մի փորձի՛ր բանաստեղծել...

-Ու ապրում ես դու միայն հանգո՞վ...

-Նախ՝ կյանքում պետք է ապրել... կյանքով,
Նոր միայն հանգի մասին խորհել,
Կյանքը հանգի հետ համատեղել:
Թող աշխարհն ապրի հանգ ու վանկով,
Իսկ մենք՝ այսօրվա մեր այս կյանքով:
«Բանաստեղծելը»... հեշտ է ասել,
Սակայն... դժվար է բանաստեղծել...

...Ու, ընթերցո՞ղ իմ, մի զարմանա,
Որ ամենօրյա հոգսը թողել,
Անգամ զրույցը այս պարզամիտ
Ես որոշել եմ... հանգավորել...

21.06.82, Ստեփանակերտ



ԱՄՈՒՍՆԱՆԱԼՆԷ,

բե՛հ հիշ ե՛ս սպասե՛մք...

(ՈՒՄԱՆՈՐԱԿԱԿ ՀՈՒՄՈՐԵՆԵՐ)

Համակուրսեցիներին՝ մշտավար սիրով

ՆԱԿԵՐԳ

Մոռացած տարիք, կյանք ու ժամանակ,
Սրտերում մեր՝ սեր սուրբ ու անարատ,
Գրքերին գերի, գրքերով տարված,
Գիտության աշխետ նժույզներն հեծած՝
Առաջ ենք սուրում փութով-շտապով,
Նոր բարձունքների տենչով-փափագով,
Միևնույն... մենք կյանքից շա՛տ ենք ետ մնում,
Թեկուզև փութով առաջ ենք սուրում:



ԼԵՆՍԵՐԻ ԴՎԱԸ

Լենսեր Դարախանյանին

...Առաջին հերթին խոսենք Լենսերից:
Ամուսնացա՞՞ծ է, թող որ՝ հետո՞ ինչ:
«Երեկո»-ներում այնպե՛ս է պարում,
Ասես դեռ նոր է իր սերը ճարում:

Կինը չի խանդում. ի՞նչ կա, թող պարի՛,
Միայն մի պայման՝ իրեն չդավի՛:

Լենսերից պիտի օրինակ առնել
Ու նրա նման սիրել սովորել:

...Սիրելը՝ սիրել,
Բայց այնպե՛ս անենք,
Որ նաև... սիրվենք...

ԴՎՐԳԵՎՆ ՈՒ ՆԻՆԱԿ

*Պարզև Աղաբեկյանին
Նինա Նալբանդյանին*

Ա՛խ, եթե սիրեր Նինան Պարզևին՝
Ես նրանց սի՛րտս կպարզևեի:
Երկուսին էլ շատ լավ եմ ճանաչում,
Ազնիվ փափագով սիրում ու պաշտում:

Պարզևին գիտեմ, քաջ տղա է նա,
Եթե պետք լինի՝ սարեր շուռ կտա:
Նինան էլ լավն է, համեստ է, պարկեշտ,
Էլ ինչո՞ւ իրար մերժեն այդքան հեշտ:
Էլ ինչո՞ւ ապրեն իրարից խռով,
Իրար կարոտով և ոչ թե սիրով:



ՄԵՐ ԱԼԼՔԻՏՆԵՐԸ

*Անահիտ Խաչիյանին
և մյուս երկու Անահիտ Հարությունյաններին*

Անահիտները այնքան շատ են մեր՝
Մարդ չգիտե, թե ում մասին գրել:

Մի Անահիտի անվանում ենք «Ժ»,
Մյուսին էլ՝ «Դ»:
Երրորդը՝ «Խ» է, Անտ Խաչիյան,
Անուն-ազգանուն մաքուր հայկական:
(Երևի պապը Խաչ է գողացել,
Անունն էլ... Խաչիպապ է մնացել):
-ՉԷ՛ մի...

...Լա՛վ, թողնենք նրան իր հոգսին
Ու վերադառնանք Անահիտ «Ժ»-ին:

ԱԼԼՔԻՏ «Ժ»-Ն

Եվ հրաժեշտից մինչև նոր հանդիպում՝
Ապրում ենք հուշով նախորդ հանդիպման,
Բայց տարին, ինչքան դասերը գերում,
Երկու անգամ ենք այցելում իրար:
Այցի ենք գալիս իրա՞ր, թե՞ իրավ
Կան այցելելու առիթներ հարմար:
Դե, իհարկե, կան: Ու հավաքվելով՝
Գզվում ենք իրար մենք... հայացքներով:
Ու թե պատրաստ չենք քննություններին՝
Թող ների դա մեզ մեր կուրսի... «ներին»:
Իսկ Անահիտ «Ժ»-ն պատրաստ է ամեն
Քննության: Ու՛ միշտ:
Սակայն սիրում է շրջել քաղաքում,
Այնքան, մինչև որ գիշերը կիսվի
Ու հաջորդ օրը նորեն սկսվի...

...Բայց մի անգամ նա «Չյորտվի մոստից»
Ընկավ: Քիչ մնաց... ուշքը գար... փոստից:
Ու... մնում է դեռ նա փոստի հույսին՝
Բա դա վայել՞ է, արդյոք, մեր կուրսին:

22.06.85, Ստեփանակերտ



ԱՆԿՆԵՐ «Ի»-Ն

Առաջին անգամ, երբ տեսա նրան՝

Ասի՛ աղջիկն այս ինչի՞ է նման...

-Պե, կապիկ հո չի՞, աղջիկ է էլի,-

Վրա տվեցին այս ու այն կողմից:

-Լա՛վ աղջիկ է նա,- Պարզևն ասաց,- տե՛ս,

Զինի՞ հանկարծ... սիրահարվել ես...

Այդ մասին, սակայն, դեռ չգիտեի,

Բայց այնպե՛ս լինեմ... սիրահարվեի՛...

...Լա՛վ, ասենք՝ թե ես սիրահարվեցի,

Բայց սիրտս ինչպե՞ս դռներն իր բացի:

Թե սերս հայտնեմ մի քանի տողով,

Կհասկանա՞ նա ու կապրի՞ սիրով:

Իսկ թե չընդունի՞ գրողը հետը,

Թող գնա ընկնի Ախուրյան գետը:

...Պահը հարմար էր, նա դաս էր պատմում,

Իսկ ես՝ ինչ որ բան թղթին խզեզում:

Նա «Բայ» էր պատմում, բայի սեռերից՝

«Կրավորական», «չեզոք»... Իսկ ինձ ի՞նչ՝

Ես լսում, ոչինչ չէի հասկանում,

Մինչդեռ... իմ սիրո տողե՛րն են ծնվում.

...Պե բայի սեռի մասին ես պարզեմ,

Ես բռնեմ եմ ու... բա՛ն չեմ հասկանում:

Պե մի՛ նեղանա՛ չե՛մ հասկանա ես,

Ինչ ուրի՛շ հարց է հուշում պարզապես:

Պե պարզի՛ր, պարզի՛ր «Բայ», թե «Գոյական»,

Իսկ ես բռնեմ ու... բա՛ն չհասկանամ...

...Պարզևը թուղթը երբ նրան տվեց՝

Կարդաց ու... «Էլի կբերես», - խնդրեց:

Բայց... չհասկացավ: Գրողը հետը:

Թող գնա՛ ընկնի... Ախուրյան գետը...



ՄԵՐ ՉԻՆԱԿ

Չինա Տիվանյանին

Մեղրավանի վերին թաղի մեր Չինան
Պատրաստ է միշտ սեմինարի, քննության:
Սակայն ունի իր հոգու մեջ մի լուռ բաց`
Այն, որ մինչև հիմա մարդու չգնաց:
Ինքն էլ հավվեց գրքի ձեռին` մոմ դառած:

Բայց մոմի լույսն անվերջ պիտի բոցկլտա,
Մինչ երազի իր ասպետը երևա...

11.04.86, Ստեփանակերտ

ՔԱՆՈՒՆՈՒՄԻՆՈՒ ԱՊԱՏ

Ինչքան խոհ ու հույզ է ծնվում
Քննությունից առաջ,
Ինչքան երազ ու անրջանք`
Քննությունից առաջ:

Սիրտդ սիրո ծով է դառնում
Ծփում ալիք-ալիք,
Ու նորից-նոր լիցքավորվում
Քննությունից առաջ,
Հուզվում, ափից ելնում նորից`
Քննությունից առաջ...

04.06.82, Ստեփանակերտ



ԼՇԱԿԻ ՀԱՐՉՔԸ

Անայա Գրիգորյանին

Աշանից մի աղջիկ սովորում է մեզ հետ,
Ուշ-ուշ ենք տեսնվում, մի կուրսում ենք թեպետ:

Հմայի՛չ է այնպես, հայացքով գեղեցիկ,
Իսկ երբ որ խոսում է իր ձայնով երգեցիկ՝
Թվում է՝ աշխարհում արև՝ է, գարո՛նն է:
Սակայն նա սիրում է Աշանի... աշո՛ւնը:
Իսկ հետո էլ սիրեց մի սևաչ տղայի
Ու փախավ շա՛տ հեռու իր սիրած Աշանից:

...Մեզ էլ է նա ուշ-ուշ այցելում, ի՞նչ անենք,
Բայց ինչքան հեռանա՝ նրան միշտ կհիշենք
Աշանը, աշունը ու մենք...

15.12.84, Ստեփանակերտ



Հիմա ի՞նչ անենք, ընկերներ՛ր, ասե՛ք,
Մեզ ընկերական մի խորհո՛ւրդ տվե՛ք:
Գործը թե այսպես մինչև վերջ գնա՝
Վերջը զգո՞ւմ եք, թե ինչ կդառնա:
Սպասե՛նք: Դե, լավ, սպասե՛ նք մի քիչ:
Կյանքն առջևում է, չի փախչում, ոչի՛նչ...

11.03.82, Մարտակերտ



Մեր սպասումը երկար չտևեց:
Մենք ամուսնացանք: Մեր բախտը բերեց:
Մենք մտանք կյանքի իսկական ուղի,
Փնտրեցինք-գտանք մե՛զ սիրողներին:
Այդ սերը բերեց մեզ երգ ու բերկրանք՝
Կյանքի կոչելով տենչ ու երազանք:

...Մեր սիրո համար հուր է ու գինի՛՝
Մեզ վրա ազդած դասը Լենսերի...



Մենք ԼՄՈՒՍՆԱԼԱԼԷՔ, ԴՈՒՔ ԴԵՌ ՍՂԱԿԵՐՔ...

...Եվ Վճուսներին

Մենք ամուսնացանք: Օրերի փոշին
Էլ չի աղտոտում մեր կյանքի ուղին:
Ու պիտ ծերանանք մեկտեղ, մի բարձի,
Իսկ մի «երկրորդ բարձ» եթե սեր հայցի՞...
Երբե՛ք: Քանզի դուք սիրում եք նրանց՝
Ամուսնյակներին ձեր, մենք՝ մեր կանանց,
Որոնց մեր կուրսում պիտի չընդունենք,
Սակայն միշտ պիտի պաշտենք, գուրգուրենք:
Քայլենք միասին, մեկ ճանապարհով,
Ապրենք, որ սերը մնա ապահով:

...Բայց մենք ունենք և...չամուսնացածներ,
Իսկ դա պատիվ չի բերում կուրսին մեր...

Ասացե՛ք, խնդրեմ, հիմա ի՞նչ անենք,
Մենք ամուսնանանք, դուք դեռ սպասե՛ք...

22.06.85, Ստեփանակերտ



«ԽՈՐԵՆԱԳԻ ՀԵՏ»

Քառասուն տարի առաջ էր: Ե՞րբ էր...
Գրախանություն
Խորենացի էր վաճառվում նորից՝
«Հայոց պատմություն»:
Իսկ մենք զբաղված՝ մի օր՝ ստուգարք,
Մի օր՝ սեմինար, մի օր՝ քննություն,
Ու չհասցրինք:
Իսկ մի օր էլ էրբ ժամանակ գտանք
Մենք գրախանութ մտնելու համար՝
Խուլ դարակներում Սուրբ Խորենացու
«Հայոց պատմություն» մատյանը չկա՛ր...

...Անցել է ուղի՛ղ... քառասուն տարի:
Գրախանություն
Հիմա էլ նորից
Խորենացի է վաճառվում...
- Պարզև՛,-
Ասում եմ,-գևա՛նք
Ու Խորենացի գնենք...
Պարզևն էլ.
-Ձբաղված եմ, է՛, հետո՛ կգնենք...
-Հետոն գալիս է,-ասում եմ,-այո՛,
Բայց ո՛ւշ է գալիս:
Հիմա էլ եթե չգնենք՝ պիտի
Սպասենք հետո՛ գնելու համար,
Քառասուն տարի հետո, լսո՞ւմ ես:
Քառասուն տարի՛...



ԱՉՐԵՎԻ ՏԼԿ

Քայլում եմք սորից հոգևած փողոցով
Ես ու Պարզեր: Պարզևի ձեռքին
Լ.Հովակիմյանի «Բարի անձրևն» է:
Բարի՞ անձրևը...
Իսկ չա՞րս... որն է:
Անձրևը...

Հանկարծ խենթ որոտներով
Մթազում է խաղաղ երկինքը,
Անձրև է տեղում,
Անձրև՝ հորդ ու խենթ...
-Վազենք...

Վազում եմք
Ու մայթերը թաց
Լուռ մտմտում են մեր ոտքերի տակ,
Իսկ անձրևն անգութ
Շարունակում է քրքրել սորից
«Բարի անձրևի» թրջված էջերը:
Ի՞նչ է մտածում այդ անիծյալը,
Մի՞թե ես «բարի անձրևին» անգամ
Հանգիստ չի տալու:
Ո՛ր մնաց՝ «չարին»:
Կամ էլ՝ գուցե... մեզ:
Կամ էլ՝ գուցե
Ինքն է «չար անձրև» կոչեցյալը հենց:
(Ի՞նչ իմանամ ես)...

-Վազենք...
Վազում եմք
Ու մայթերը թաց
Լուռ մտմտում են մեր ոտքերի տակ:
Գրախանութի շենքի մոտ.
-Մտնենք,- ասում եմ...
-Է՛հ, այս խելագար ու խենթ անձրևին
Ի՞նչ գիրք գնելու ժամանակ է ո՛ր...
-Մտնենք,- սորից եմ համառում,-



Մտնե՛ր...

Մտնում եմք: Վերցնում

Մովսես Յախշունցի «Անձրևից հետոն»

Ու կորից փողոց՝

«Անձրևից հետոն»

Հորդ անձրևի տակ թերթելու համար:

Թող տեսնի խենթը ու քիչ մեղմանա,

Թող զգա, որ ինքն ինչքան համառի,

Ինչքան կենդ լինի՝

Հիմա անձրև է՝

Հետո... «անձրևից հետո» կլինի...



ԳՐԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏ

Ես ու Պարզևն եկք:
Գրախանութի մոտ կանգնել եկք լուռ
Եվ սպասում եկք՝
Կարենն, ուր որ է, պիտի երևա...

Հանկարծ մի աղջիկ
Երկու գրքույկ է ձեռքին
Դուրս գալիս գրախանութից:
Այստեղ Պարզևք չի դիմանում ու...
-Օրիորդ, մի վայրկյան կարելի՞ է Ձեզ...
-Չէ՛, չի կարելի և ո՛չ մի վայրկյան էլ...
-Բայց ես անպայման պիտի ասեմ, որ...
-Դե, լավ, ասացե՛ք,- տեղի է տալիս:
-Գրքերից բացի դուք պետք է նաև
Ավետո՛ց գնեիք:
-Ինչո՞ւ,- հեզևախառն ժպիտն է կախվում
Հարցումից նրա:
-Դե, որովհետև... կարճատես եք Դուք...
-Ինչի՞ց իմացաք...
-Գրախանութում Տերյան կար, ազատ,
Իսկ Դուք թողել ու... այդ ի՞նչ եք գնել...

02.08.82, Ստեփանակերտ



ՀՐԱԿԵՇՏԻ ԽՈՍՔ

ԿԱՍՐ PARODIA ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆԻ «ԱԽՐ ԵՍ ԻՆՉՊԵՄ» ԲԱՆԱՍՏԵՂԵՈՒԹՅԱՆ

Ախր ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ տազնապներ չկան,
Ախր ուրիշ տեղ ստուգարք չկա,
Ախր ուրիշ տեղ քննաշրջանում
Կամա-ակամա խորովվել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ Նիևաներ չկան,
Սեդաներ չկան, Ջիևաներ չկան,
Ու «պտըտորված» Մարինե չկա:
Ախր ուրիշ տեղ
Մեզ թև ու թիկունք Լեևներն էր չկան,
Գայանե չկա, Մարիետա չկա,
Ժ ու Դ չկա:

Ախր ուրիշ տեղ՝ տեղահան եղած՝
Եկած՝ ուսերով մեր կուրսին հենված
Ուրիշ կուրս չկա:

Ախր ուրիշ տեղ, մեր դասախոսներ,
Ձեզ նման բարի, անշահախնդիր,
Պարզ ու հասարակ էակներ չկան:

Ախր ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ձեզ...

10.04.86, Ստեփանակերտ



Ժողովրդական

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

ԼՅՆ ԻՂՁՆ Է...

Հանելուկներ



Հարը՝ դյուզ,
Մարը՝ կեռ,
Ախճիգյը խելունք,
Տղան՝ պել:

(խաղողի վազը, մատը, խաղողը, գինին)



-Քել թեն, քել թեն,-
Անումը տամում՝
Գյուղում չըս:

(թի)





Աքյտում,
Բաքյտում,
Քյաքուկատ փռնեմ՝
Ծյաքտում:
(Կշեռք)



Քիևամ ա՛ կյամ,
Քիևամ ա՛ կյամ,
Ուրան տեղան
Տյուրուր չի կյամ:
(Դուռ)



Ասում ըմ եկ՝
Կյամ չի,
Ասում ըմ կյամիլ՝
Կյամ ա:
(Շրթունքներ)



Քիևամ ըմ՝
Հետաս կյամ ա,
Քիևամ չըմ՝
Մըևամ ա:
(Սուվեր)



Շօևը մըմմըռա՛
Դուդան օռչի:
(Տրաղաց)



Չաթվեն ճյուր տամ՝
Մոզին օռչի: *(Պոում)*



Պիծծի պտրիան՝
Շեխշավ լիզյո: *(Նոու)*



Էրգյան լատան՝
Շօխկը չոնե: *(Գետ)*



Քըզանա տամ՝
Պուք չի կյալ: *(Անուն)*



Հողե լուվա,
Մսե գյուլա: *(Մուկը՝ բնում)*



Ծիքյոս տամ՝
Կըրճանում ա: *(Ծիախտոտի գլանակ)*



Կըտրումըս՝
Խուրանում ա:
(Փոս)



Էրգյան հըղե՝
Բյումա շարած:
(Ձիու հետքեր)



Մըթեն տոն՝
Գյումփլակը միջին քոս:
(Թթխմոր)



Կյումաշը՝ գյուլումը,
Տյաքին՝ չուլումը:
(Շերեփը՝ կաթսայում)



Վար տընծըկեսը կիլոուկես ա,
Պա տասը տընծըկես՞սը
Թանի կիլոուկես ա:
(Տաս ու կես կիլոգրամ)



Բըշհանա քիշերավ
Իննիս Էրկու փոսու մաչ:
(Անդրավարտիքի փոխքերը)

ՄԱՐԿՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



-Աղվես:
-Խանեն քյուրքյումը թաղվես:



-Տանձի:
-Կյոխըտ տակեն խանձի:



-Շյօրի:
-Ճուղևան փռևե՝
Ճյօրի:



-Չըկրե:
-Ճուղևան փռևե՝
Ճըկրե:



-Հրոածած:
-Կըլխետ ածած:



-Գյուլասի:
-Լոք տամ յերիևիմ քու հասի:





-*Ձապեն:*
 -Յրրա պրծնեմ՝
 Կաս թապեն:



-Շաշա, Փաշա,
 Կոտրած մաշա,
 Կընեգըտ մեռնե՛
 Կյանք թըմաշա:



-Ախճի, ախճի,
 Մարթըտ փախճի,
 Ես փռնեմ՝
 Տյու պաչի:



-*Ախճի, նանե:*
 -Հիւչ ա՞, ջանե:
 -*Մեր շենին ջյահիլ-ջիուլը*
Կարկուտ տանե:
 -Խէ՞, ա աշկերըտ քե կենա:
 -*Վար մինը կա վուչ,*
Թա ինձ տանե:
 -Ախճի, պա վար տանե
 Ու սպա՛նե...
 -*Տհաննամը,*
Թյաքի տանե...



-*Մին, էրկու, իրեք...*
 -Մին ծմերուկ տես պիրեք:

-Չորս, հենգ, վեց...
-Ծըմերուկը վերինգյավ՝ կոտրեց:

-Օխտը, օթ, հնը...
-Հինչ ա՞րա կյինը:

-Տասսը...
-Տուվեթյ նրա վնասը:



-Մին:
-Օտես մեր շանը փին:

-Էրկու:
-Քու հար քյինա կորկու,
Կորկը պիրի խաշ անե,
Վեննատ փըռնե՝ քաշ անե:

-Իրեթ:
-Քաթ կեր քիշեր-ցիրեկ:

-Չորս:
-Կոլ տո ճըճոս:

-Հենգ:
-Օտես մին վաննա խլենքյ:

-Վեց:
-Սօկնեն հալավը կյեց:

-Օխտը:
-Օտես մեր շանը կօխկը:

-Օթ:
-Յեր խըմե մին յագան սօթ:

-Ինը:
-Կեր մեր շանը ծիծիկը:

-Տասսը:
-Կեր մեր ուբոռնուն պրիպասը...

ԱՂՆՆԵՐ ՈՒ ԱՂՕՎՈՒԹՅՆԵՐ



Վըրդեղ հաց՝
Ընդեղ կաց:



Կյինին թյունդ ա՝
Կյինի խմող,
Տանըտ տյուս կյա:



Կյինին թանգյ չի,
Ամմեն մարթու պյան չի:



-Կյինի, ասե, վերևա՞ շատ՝
Քանդածը՞տ, թա շի՞նածըտ:
-Շինածըս յես գյուդում յըմ,
Սահման չօնե քանդածըս:



Արադ, կյինի, ծըեր
Իրչինը յավ ա,
Յերգորոդը բավ ա,
Յեռորոդը ցավ ա:



Խմելիս վախտը՝
Հա՛յ-հա՛յ,
Խմելան յետը՝
Վա՛յ-վա՛յ...



ԱՎԵՆԵՐ ՈՒ ԱՎՕՎԵՐՆԵՐ

ձեկնաբանություններով, հանդերձ



Թրի կտրածը կլավանա,
Լեզվի կտրածը չի լավանա...
*...Տեսնես հիշո՞ւմ են այս ասացվածքը
Սագայանը և մյուսները:*



Ջուրը չտեսած՝
Չեն բռբիկանա...
*...Տեսել են՝
Էլի չեն բռբիկանում:*



Ուրագն իր կոթը չի տաշի...
*...Բայց ուրիշ ուրագի կոթ
Հաստատ կտաշի:*



Կարմիր կովն իր կաշվից դուրս չի՛ գա...
...Բա մոխրագո՞ւյնը:



Մի ծաղկով գարուն չի գա...
...Պիտի սպասել մյուս ծաղիկներին ևա:



Ինքդ քեզ մի՛ գովիր,
 Թող ուրիշները գովեն...
*...Ի՛նքդ քեզ գովիր,
 Երբ ուրիշները չեն գովում:*

ԽՂՂԻՎՆԵՐ



Թուխալ ա՛ թոռ չի կյամ,
 Մթնալ ա՛ տոն չի կյամ,
 Էս անդար պըերցին յրա
 Առանց յար քոն չի կյամ:



Ծիրանե ծառ, բար մի տօ,
 Ճուղներըտ տյուրուր մի տօ,
 Ամեն կոխկավըտ հընցընելավ՝
 Դյարդերըս ուրուր մի տօ:



(Մորս խոսքերից)
 Հիբը կըինի՛ կըմըռնանա,
 Ծովեն ճյուրը կըթըքանա,
 Բըլեն բալան կըմըճանա,
 Ծովեն ճիրումը կըլըղանա:



ՂԱՂԱՔԻՂԱ...

Բարբառային տարբերակ

*Գրել եմ արցախյան առաջին հանրահավաքների
անմիջական տպավորությունների տակ ժողովրդիս
պարզ մտածողությամբ, որ եթե ինդրենք՝ Մոսկվան
անմիջապես Արցախը կմիացնի Սայր-Հայաստանին:
Չէիք ակնկալել այսօրվա պատերազմը...*

*Հեղինակ
27.02.94, Ստեփանակերտ*

Ղարաբաղը հայոց վեղն ա,
Հայոց աշկեն մաչի յեղն ա,
Հայոց անթեղ կրակ-պօղն ա,
Ամմա հայոց մաշկեն հօռոը
Նրա տյօղն ա:
Հի՞նչ անե իսեղճ Ղարաբաղըս՝
Լյուզին՝ օրիշ,
Խօսքը՝ օրիշ,
Հայոց սրտեն Էնքան մօտե,
Բայց հայ տանան հեռու տէ՛ղ ա:

Ու հըվաքվեց ժողովուրթը՝
Միտիևզ ըրեն մեծ ու կյուճուր,
Բանվօր,
Քաղվօր,
Թա՛ բօ՛լ-հերիք.
Յեկեք՛ մինին դարկենք Մոսկօվ:
Յեր կաց քյինա՛, Գա՛բօ ապա,
Մոսկօվու մեծ թաքավերեն
Մեր դյարդերը պատմե մին-մին,
Թող ճար անե...

...Գա՛բօ ապան քեցավ Մոսկօվ,
Մոսկօվու մեծ թաքավերեն
Ասեց.

- Տյու մեր թաքավերնըս՝
Կյանքըտ հազար տարավ ինի,
Տիյեր Աստուճ, տուվեր տյուվըս,
Ղարաբաղցուն հույսը տյուվըս:
Ժողովուրթես տեղը նեղ ա,
Լյուզին՝ օրիշ,



Խօսքը՝ օրիշ,
Հայոց սրտէն էնքան մօտ,
Բայց հայ տանաս հեռո՛ւ տեղ ա:
Ղարաբաղը օ՛րիշ վեղ ա...
Ղարաբաղը անթեղ-պօղ ա,
Քանի՞ մընա մօխրէն տակէն,
Քանի՞ մընա տյօղը սըրտում՝
Օրիշ իսօքավ,
Օրիշ յուզվավ:
Յէ՛ք, Մոսկօ՛վու մեծ թաքավեր,
Մեր էս դյարդան մեզ ըզադէ,
Մունք մեր վեղէն տարը տյեռնանք,
Մունք մեր թանէն,
Մեր թըցանէն տարը տյեռնանք,
Վեր մեր հացը օրիշ չօտէ,
Ժողովուրթըս էլ՝ լյաց չօտէ...

Մոսկօվու մեծ թաքավերը ասեց.
- Գա՛րո ապա, բօ՛լա,
Յէս տեղակըմ էտ պեներան,
Տա էն Ըստալին-գյօռբագյօռի
Փռնած պենն ա:
Քյիհա ա՛նտ ժողովուրթէտ՝
Թօղ տեմ կէնա,
Հէսա կյամում՝ իմ գորքավըս
Ղարաբաղըտ օրիշ յուզվա,
Օրիշ իսօքա ազադ անեմ:
Թօղ հայ իսօքը թէվ յօր օնէ՝
Ղարաբաղա սարերըն իննի,
Հինչ տեղ ցավ կա՝ դա՛րման անէ,
Հինչ տեղ չօռ կա՝ քըշի տա՛ նէ...

17.02.88, Ստեփանակերտ



ՈՐԻՍ ՈՐՍԵՆԻ

ՁԱՓԱՅԻ ԵՎ ԱՐՁԱԿ ԵՐԳԻԾԱԿՔ

Պարոդիաներ

Ֆելիետոններ

Էպիգրամներ

Սանրապատումներ

Արցախյան բանահյուսության նմուշներ

Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՍ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2008, 80 էջ:
Տպագրված է «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ի տպարանում

ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ

САТИРА В СТИХАХ И В ПРОЗЕ

Пародии

Фельетоны

Эпиграммы

Миниатюры

Из Арцахского фольклора

На армянском языке

Степанакерт, изд. «Вачаган Барепашт» СП НКР, 2008, 80 стр.
Опечатано в типографии ООО «Дизак плюс».

Հեղինակի հասցեն և հեռախոսները՝

ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Տիգրան Մեծի փող.23ա, բն.2

բն.՝ (+374 47) 950794

ծառ.՝ (+374 47) 950093

բջջ.՝ (+374 97) 270794 (ԼՂՀ-ում)

(+374 91) 108831 (ՀՀ-ում)

Էլ.փոստ՝ arisarseni@mail.ru

